Հավելված

ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի

հուլիսի 7-ի N 1166-Լ հրամանի

Ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 2024 **ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

NN	Նպատակ	Միջոցառումներ	Գործողության կատարման ընթացքը	**Գործողության արդյունքը (առկայության դեպքում՝ թվային ցուցանիշներով)**	**Գործողության չկատարման վերաբերյալ պարզաբանում**
1. Պարենի առկայություն					
1	Հողային և ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման, կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության համակարգի ներդրում	1.1 Ոռոգման ջրի ստանդարտի մշակում	Ոռոգման ջրի ստանդարտի մշակման աշխատանքներն ընդգրկվել են 2024 թվականի պետական ստանդարտացման ծրագրում և «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի 2024 թվականի հունիսի 28-ի N 71-Ն հրամանով ընդունվել և գործողության մեջ է դրվել **ՀՍՏ** 438-2024 «Ոռոգման ջուր. Ոռոգման ջրի որակին ներկայացվող պահանջներ» ազգային ստանդարտը:	**ՀՍՏ** 438-2024 «Ոռոգման ջուր. Ոռոգման ջրի որակին ներկայացվող պահանջներ» ազգային ստանդարտ	
		1.2Ագրոօդերևութաբանական նշանակության տարեկան 3-4 կայանների տեղադրում հանրապետության այն	ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ձեռք են բերվել «Միկրոստեպ-Միս» ընկերության 9 ավտոմատ օդերևութաբանական կայաններ, որոնք տեղադրվել են ՀՀ Կոտայքի, Տավուշի, Գեղարքունիքի և Արարատի մարզերում:	Առկա են 9 ավտոմատ օդերևութաբանական կայաններ: Նախկինում տեղադրված 23 ավտոմատ օդերևութաբանական կայանները պետական բյուջեի	

		կլիմայական գոտիներում, որտեղ մոնիթորինգ չի իրականացվում և տեղակայված կայանների ցանցն համեմատաբար նոսր է	Ավտոմատ օդերևութաբանական կայաններն ինտեգրվել են առկա՝ տվյալների ստացման և փոխանցման համակարգին:	միջոցների հաշվին համալրվել են ձյան ծածկույթի բարձրության, 4 խորություններում հողի ջերմաստիճանի և խոնավության տվիչներով, ինչպես նաև ջրային մակերևույթից գոլորշացման 6 տվիչներով, որոնցից 3-ը տեղադրվել են Սևանա լճի ավազանում:	
		1.3 Հիդրոօդերևութաբանության և հողերի մոնիթորինգի համակարգերի արդիականացում	Հիդրոօդերևութաբանության և հողերի մոնիթորինգի համակարգերի արդիականացման նպատակով աշխատանքներ են տարվում ֆինանսավորման հայթայթման ուղղությամբ:		
		1.4 Փոփոխվող բնակլիմայական պայմաններում ըստ գյուղատնտեսական գոտիների մշակաբույսերի արդյունավետ մշակության հնարավորությունների գնահատում	Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) հետ համատեղ իրականացվել է բարձրարժեք մշակաբույսերի դիվերսիֆիկացիայի բարձրացմանն ուղղված գյուղատնտեսության ոլորտի արտադրական համակարգի բարելավման արտադրողականության և մրցունակության բարձրացմանն ուղղված գնահատում և գյուղատնտեսության ոլորտի առկա կարիքների ուսումնասիրություն: Հաշվի առնելով գյուղատնտեսության ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության ուղղությամբ ԱԶԲ-ի հետ իրականացվող համատեղ աշխատանքները՝ ԷՆ կողմից գրություն է ներկայացվել ԱԶԲ-ին փոփոխվող բնակլիմայական պայմաններում ըստ գյուղատնտեսական գոտիների մշակաբույսերի արդյունավետ մշակության հնարավորությունների գնահատման միջոցառման		

			իրականացման շրջանակներում տեխնի-կական աջակցություն ցուցաբերելու առաջարկությամբ: Բացի այդ 2024 թվականի հուլիսի 26-ից ուժի մեջ է մտել «Կլիմայական փոփոխություններին հարմարեցվող պարենային անվտանգության բարձրացման ծրագրի» միջազգային դրամաշնորհային համաձայնագիրը, որը նպատակ ունի բարելավել ՀՀ Տավուշի և Շիրակի մարզերի 10 խիստ խոցելի համայնքների պարենային անվտանգությունը, աջակցել վերջիններիս՝ ապրուստի միջոցներ, եկամուտ ստեղծող գործունեությանը և կլիմային հարմարվողական կարողությունների զարգացմանը, հետևյալ 3 բաղադրիչների միջոցով. 1. Կլիմայի նկատմամբ կայուն էներգետիկ լուծումների ներդրում և հետագա կիրարկում, 2. Սննդի անվտանգության բարձրացման նպատակով կլիմայական խելացի գյուղատնտեսական տեխնոլոգիաների կիրարկում, 3. ՀՀ էկոնոմիկայի նախարարության ինստիտուցիոնալ կարողությունների ավելացում կլիմայախելացի գյուղատնտեսական պլանավորման ընդլայնման առումով: Ներկայումս ձևավորվում է Ծրագրի իրականացման թիմը: Միաժամանակ հայտնում եմ, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՓԲԸ-ում փոփոխվող բնակլիմայական պայմաններին հարմարեցված նոր սորտերի ստեղծման	Իրականացվում են բանջարա-բոստանային մշակաբույսերի ներմուծված 20 և ավել սորտերի փորձարկման աշխատանքներ, որոնք կշարունակվեն նաև 2025 թվականին: Բանջարաբոստանային մշակա-բույսերի տեղական արտադրու-թյան, փոփոխվող կլիմայական պայմաններին հարմարված (չորադիմացկուն, տոթադիմացկուն) թվով 16	

			ուղղությամբ ընթանում են սելեկցիոն աշխատանքներ:	սորտեր ներկայացվել են ՀՀ տարբեր բնակլիմայական գոտիներում շրջանացման:	
2	Բնական ռեսուրսների կայուն կառավարման միջոցով պարենային ինքնաբավության մակարդակի բարձրացում	2.1 Արոտների օգտագործման և կառավարման պլանի մշակում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության նախաձեռնությամբ՝ փորձագետների կողմից մշակվել է «Տարածքային ինքնակառավարման մարմինների կողմից արոտների և խոտհարքների կառավարման գործընթացների կազմակերպման վերաբերյալ» մեթոդական ուղեցույց, որը ի ղեկավարում տրվել է Տարածքային ինքնակառավարման մարմիններին:	Մշակված արոտների օգտագործման և կառավարման պլան:	
		2.2 Մշակված պլանով սահմանված մեխանիզմներով արոտների օգտագործման կառավարում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության նախաձեռնությամբ՝ փորձագետների կողմից մշակվել է «Տարածքային ինքնակառավարման մարմինների կողմից արոտների և խոտհարքների կառավարման գործընթացների կազմակերպման վերաբերյալ» մեթոդական ուղեցույց, որը ի ղեկավարում տրվել է Տարածքային ինքնակառավարման մարմիններին:	2024 թվականի դրությամբ ՀՀ 18 համայնքներում առկա են ավագանու կողմից հաստատ-ված արոտների օգտագործման (կառավարման) պլաններ և 22 համայնքներում պլանները հաստատման փուլում են, մյուս համայնքներում աշխատանքներ են տարվում պլանների մշակման համար: **ՀՀ Արարատի մարզ՝** Վեդի համայնքում ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 189-Ա որոշմամբ հաստատված արոտավայրերի և խոտհարքնե-րի օգտագործման կարգի համաձայն արոտավայրերը տրամադրվում են ըստ կենդանիների տեսակի և քանակի հաշվարկի:	

				2024 թվականին կնքվել է արոտավայրերի 78 կարճաժամ-կետ պայմանագիր՝ • Արտաշատ համայնքում առկա է 21451.5 հա արոտ: Կնքվել են 13296.9 հա-ի օգտագործման պայմանագրեր: • Արարատի ավագանին 184.6 հա հեռագնա արոտները տրամադրել է օգտագործման, թվով 3 միավորով 3 անձի, • Վերին Դվին համայնքում պարզեցված կարգով կնքվել է 22 համապատասխան պայմանա-գիր ըստ արոտամասերի, որը կազմում է 4000 հա: **ՀՀ Գեղարքունիքի մարզ** - 5 համայնքներում ավագանու որոշմամբ հաստատվել են արոտների օգտագործման պլանը՝ արոտների դեգրադա-ցիայի կանխման և արոտների արդյունավետ օգտագործման նպատակով: **ՀՀ Սյունիքի մարզ** – ծանրա-բեռնվածությունից ազատվել է շուրջ 760 հա արոտավայր: **ՀՀ Արմավիրի մարզի** համայնքների ավագանու համապատասխան որոշումներ չեն կայացվել:	
		2.3 Օրգանական պարարտանյութերի տեղական արտադրության զարգացման ուղղված միջոցառումների իրականացում	Օրգանական պարարտանյութերի արտադրու-թյան խթանման նպատակով Էկոնոմիկայի նախարարությունը դիմել է Գերմանական միջազգային համագործակցության ընկերու-թյանը՝ (ԳՄՀԸ-GIZ) աջակցելու Հայաստանում օրգանական ծագման պարարտանյութերի՝	Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության (ՏՀԶՆ-BMZ) կողմից աջակցվող «Պարենային անվտանգություն» ծրագրի	

			ծախսեր-օգուտների և արժեշղթաների վերաբերյալ ուսումնասիրություն իրականացնելու, հետագա քաղաքականության մշակման և ներդրողներին աջակցելու նպատակով: Ուսումնասիրության շրջանակներում Հայաստանի համար առաջարկվել են օրգանական արտադրությամբ պարարտանյութերի համար կիրառելի մոդելներ և հնարավոր սցենարներ, գոմաղբի վերամշակման համար անհարժեշտ սարքավորումներ, ինչպես նաև ներկայացվել են ֆինանսական իրագործելիության ծախսերի հաշվարկներ, օրգանական ծագմամբ պարարտանյութերի սպառման տնտեսական գնահատում, համեմատական գնահատական հանքային պարարտանյութերի նկատմամբ, արտադրության և սպառման բնապահպանական գնահատումներ : Ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ իրազեկումն ապահովելու համար ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից լուսաբանվել և հաշվետվության տվյալները տրամադրվել են հետաքրքրվող տնտեսավարողներին: Հաշվի առնելով տեղական արտադրության խրախուսման կարևորությունը նախարարությունը դիմել է GIZ-ի աջակցությամբ իրականացվող «Բնական պաշարների կառավարում և էկոհամակարգային ծառայությունների պահպանություն Հարավային Կովկասում գյուղական տարածքների կայուն զարգացման համար» (ԷԿՈսերվ) բնապահպանական ծրագրին՝ օրգանական ծագմամբ պարարտանյութերի հիմնման շարունակականությունը ապահովելու նպատակով:	շրջանակներում գոմաղբի կայուն մշակման ու կառավարման պրակտիկաները ցուցադրելու նպատակով իրականացվել է 2 միջոցառում. ա)«Պարենային անվտանգության ամրապնդման դիմացկունության ձևավորում Հայաստանում, ՀԱԱՀ-Բալահովիտ տնտեսությունում շրջանաձև ագրոպարենի մոդելի ստեղծում», բ) «Գոմաղբի վերամշակումը՝ որպես Սևանա լճի պահպանման և առափնյա համայնքների կայուն զարգացման երաշխիք»: ՀԱԱՀ-ի Բալահովիտ տնտեսությունում, առաջին գործողության շրջանակներում, հիմնվել է օրգանական ծագման պարարտանյութերի մոդելային արտադրություն և մշակվել է 7 տոննա գոմաղբ, որը շուտով կվերածվի արժեքավոր կենսահումուսի: Մեկ այլ գործողություն, որն իրականացնում է ՀԱԱՀ-ը (դրամաշնորհի միջոցով), ներառում է 12 տեղական կենսահումուս արտադրողների աջակցությունը: ՏՀՀՆ (BMZ)-ի աջակցությամբ իրականացվող «Պարենային անվտանգություն» ծրագրի շրջանակներում Հայաստանի տարբեր մարզերում վերամշակվել է 96 տոննա գոմաղբ:	

				ՏՀԶՆ-ի աջակցությամբ (ֆերմերների համար կազմակերպվել են տեսական և գործնական ուսումնական դասընթացներ և տրամադրվել են բակտերիաներ օրգանական պարարտանյութ արտադրելու համար) իրականացվող «Պարենային անվտանգություն» ծրագրի շրջանակներում 2023թ. աշուն-2024թ.ամառ ժամանա-կահատվածում վերամշակված գոմաղբի քանակը կազմում է մոտավորապես 103 տոննա (7 տոննա ՀԱԱՀ-Բալահովիտ ֆերմայում և 96 տոննա տարբեր մարզերում): Երկրորդ ծրագրի գործողության համար, որը տեղի է ունենում Գավառի խոշորացված համայնքում և ղեկավարվում է «Վազգեն Մանուկյան» Ա/Ձ-ի կողմից, տեղական 4 անասնապահներ ներգրավվել են հեղուկ և պինդ գոմաղբի տարանջատման և կայուն մշակման մոդելային արտադրու-թյան մեջ: Վերամշակվել է 3400 լիտր հեղուկ գոմաղբ և 228 տոննա պինդ գոմաղբ: Այսպիսով, GIZ-ի աջակցությամբ իրականացվող «Բնական պաշարների կառավարում և էկոհամակարգային ծառայու-	

				թյունների պահպանություն Հարավային Կովկասում գյուղական տարածքների կայուն զարգացման համար» (ԷԿՈսերվ) բնապահպանական ծրագրի շրջանակներում, ընդհանուր առմամբ ստեղծվել են գոմաղբի վերամշակման 16 կետեր և վերամշակվել է 3400 լ հեղուկ և 331 տոննա պինդ գոմաղբ՝ 2023թ.աշուն-2024թ. ամառ ժամանակահատվածում: Միաժամանակ հայտնում եմ, որ քննարկման փուլում է գտնվում 2025 թվականից Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ-GIZ) կողմից օրգանական ծագման պարարտանյութի (գոմաղբի) մոդելային արտադրանքի իրականացման պիլոտային ծրագիրը:	
3	Ագրոպարենայի ն արտադրանքի իրացման և արտահանման ներուժի արդյունավետ օգտագործում	3.1 Արտադրանքի և շուկաների դիվերսիֆիկացում	• Մշակվել և ներքին շրջանառության փուլում է գտնվում Հայաստանի արտահանման 2025-2030թթ. ռազմավարական ծրագիրը և միջոցառումների ծրագիրը, որը ներառում է 5 ռազմավարական նպատակների կատարմանն ուղղված 14 ծրագիր և 75 միջոցառում, • ՀՀ արդարադատության նախարարության կարծիքին է ներկայացվել «Որակի և անվտանգության կառավարման համակարգերի և արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատների ստացման աջակցության ծրագիրը հաստատելու մասին» և «Արտադրանքի	• Հայկական արտադրանքի ճանաչելիության բարձրացման, գործարար նոր կապերի հաստատման և համագործակցությունների ձեռքբերման, արտադրանքի արտահանման ծավալների աճի խթանման նպատակով՝ 1. ապահովվել է մասնակցություն՝ 1) ԳԴՀ Բեռլին քաղաքում 2024 թվականի հունվարի 19-ին կայացած «Կանաչ շաբաթ 2024» գյուղատնտեսական	

			սերտիֆիկացման և լաբորատոր փորձարկումների վճարների փոխհատուցման ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծերը, • Չինաստանի Ժողովրդական Հանրապետության առևտրային կցորդին է ներկայացվել Չինաստան ներկրվող բույսերի, թռչնամսի և ենթամթերքի վնասի ռիսկի վերլուծության համար պահանջվող տեխնիկական տեղեկատվության լրացված հարցաթերթիկները, ինչպես նաև Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն հայկական ծագման թռչնամսամթերքի արտահանման թույլտվության ստացման գործընթացի վերաբերյալ հարցաշարը: • Ուսումնասիրվել է ԱՄՆ օրենսդրության պահանջները և ներկայացվել թարմ ծիրանի ու դեղձի արտահանման վերաբերյալ լրացված հարցաշարը: • Ամերիկյան Targett առևտրային ցանցում հայկական ագրոպարենային արտադրանքի ներկայացման հարցում աջակցություն և ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով կազմակերպվել է առցանց հանդիպում «Արարատ ջուր» ՍՊԸ-ի հիմնադրի և ավելի քան 20 հայկական ընկերությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:	միջազգային ամենամյա ցուցահանդեսին, 2)ԳԴՀ Բեռլին քաղաքում 2024 թվականի հունվարի 27-ին կայացած հայկական գինիների համտես-շնորհանդեսին, 3)ԱՄԷ Դուբայ քաղաքում 2024 թվականի փետրվարի 19-ին կայացած «Gulfood-2024» սննդի և խմիչքների 29-րդ միջազգային ցուցահանդեսին, 4)ԳԴՀ Դյուսելդորֆ քաղաքում 2024 թվականի մարտի 10-12-ը կայացած «ProWein 2024» սննդի, խմիչքների և հումքի միջազգային ցուցահանդեսին, 5)Իտալիայի Հանրապետության Միլան քաղաքում 2024 թվականի ապրիլի 22-ին կայացած Արցախի գինիների համտեսին, որի շրջանակներում Միլանում գտնվող Իտալիայի սոմելիեների ասոցիացիայի գլխամասում (www.aislombardia.it) տեղի է ունեցել «Արցախի գինիներ՝ համի վերջին վկաները» խորագրով արցախյան խաղողագործության վարպետության դասը, 6) Վրաստանի Հանրապետության Թբիլիսի քաղաքում 2024 թվականի հունիսի 2-ին կայացած Merano գինու փառատոնին (Merano Wine Festival Georgia),	

				7)Մեքսիկայի Գուանախուատո նահանգում 2024 թվականի հունիս ամսին կայացած 31-րդ Concours Mondial de Bruxelles կարմիր և սպիտակ գինիների մրցույթին, 8) ԱՄՆ Նյու Յորք քաղաքում 2024 թվականի հունիսի 25-26 կայացած «Vinexpo New York 2024» գինու միջազգային ամենամյա ցուցահանդեսին, 9) Լատվիայի Հանրապետու-թյան Ռիգա քաղաքում 2024 թվականի սեպտեմբերի 6-ին կայացած «Riga Food 2024» սննդի, խմիչքների, սննդի վերամշակման տեխնոլոգիանե-րի, փաթեթավորման, նորարա-րության, ՀՈՌԵԿա և խանութների սարքավորումների և ծառայությունների 29-րդ միջազգային ցուցահանդեսին, 10) Սաուդյան Արաբիայի Ռիադ քաղաքում 2024 թվականի սեպտեմբերի 16-ին կայացած «Foodex Saudi-2024» միջազգային ցուցահանդեսին, 11) Ֆրանսիայի Փարիզ քաղաքում 2024 թվականի հոկտեմբերի 19-ին «Սիալ 2024» սննդի և խմիչքի 60-րդ միջազգային ցուցահանդեսին, 12)ՉԺՀ Շանհայ քաղաքում 2024 թվականի նոյեմբերի 5-10-ը «Չինաստանի 7-րդ միջազգային	

				ներմուծման» ցուցահանդեսին (CIIE), 11) Շարունակվել է Grape Collective ամսագրում հրապարակումների շարքը և գինու բրիտանացի լրագրող Յակոպո Մացեոն ամերիկյան հանրահայտ Wine Country International Magazine էլեկտրոնային պարբերականում հրապարակել է հայկական գինեգործության մասին պատմող արդեն երկրորդ հոդվածը, 2. քննարկման փուլում է գտնվում հետևյալ ցուցահան-դեսներին մասնակցության հնարավորությունները՝ 1) ՌԴ Մոսկվա քաղաքում 2025 թվականի փետրվարի 3-ից 7-ը կայանալիք «ProdExpo 2025» սննդի, խմիչքների և հումքի միջազգային ցուցահանդեսին, 2) Ֆրանսիայի Վերսալ քաղաքում 2025 թվականի փետրվարի 10-ից 12-ը կայանալիք «Wine Paris 2025» խմիչքների միջազգային ցուցահանդեսին, 3) ԱՄԷ Դուբայ քաղաքում 2025 թվականի փետրվարի 17-ից 21-ը կայանալիք «Gulfood» սննդի և խմիչքի ցուցահանդեսին,	

				4) ԳԴՀ Դյուսելդորֆ քաղաքում 2025 թվականի մարտի 16-ից 18-ը կայանալիք «ProWein 2025» գինու և թունդ ալկոհոլային խմիչքների միջազգային ցուցահանդեսին, 5) Ճապոնիայի մայրաքաղաք Տոկիոյում 2025 թվականի ապրիլի 15-ից 17-ը կայանալիք «ProWine Tokyo 2025» սննդի, խմիչքների և հումքի միջազգային ցուցահանդեսին, 6) Սաուդյան Արաբիայի Ռիյադի քաղաքում 2025 թվականի մայիսի 12-ից 14-ը կայանալիք «Saudi Foodshow» սննդի և խմիչքների միջազգային ցուցահանդեսին, 7) Սինգապուրում 2025 թվականի մայիսի 27-ից 29-ը «Vinexpo Asia 2025» գինու և թունդ ալկոհոլային խմիչքների միջազգային ցուցահանդեսին, 8) ԳԴՀ 2025 թվականի հոկտեմբերի 4-ից 8-ը կայանալիք «Anuga 2025» սննդի և խմիչքի միջազգային ցուցահանդեսին, 9) Չինաստանի Շանհայ քաղաքում 2025 թվականի նոյեմբեր 5-10-ը «China International Import Exhibition 2025» (CIIE) միջազգային ցուցահանդեսին,	

				10)Եգիպտոսի Արաբական Հանրապետության Կահիրե քաղաքում 2025 թվականի դեկտեմբերի առաջին տասնօրյակ «Food Africa 2025» սննդի և խմիչքի ցուցահանդեսին, • Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը հայտ է ներկայացրել և հաջողությամբ ընդգրկվել է ROTOBO (Japan Business Association ROTOBO) կողմից ներկայացված և Ճապոնիայի ԷԱԱ նախարարության կողմից ֆինանսավորվող «Business Matching» ծրագրում, որի միջոցով հնարավորություն է ստացել 2025 թվականի մարտի 11-ից 14-ը ազգային միասնական տաղավարով հայկական գինեգործական 10 ընկերության ներկայացնել Տոկիոյում կայանալիք FOODEX JAPAN 2025 ցուցահանդեսին՝ ներկայացնելով Հայաստանը որպես գինու նվիրական երկիր: Միաժամանակ հայտնում եմ, որ տարբեր երկրների հետ կայացած միջկառավարական հանդիպումների ընթացքում նախարարը և նախարարի տեղակալները քննարկել են արտադրանքի և արտահանման	

				շուկաների դիվերսիֆիկացման հարցում աջակցություն ստանալու, ինչպես նաև փոխադարձ առևտրաշրջանառության ծավալների ավելացման հնարավորությունները: Բացի այդ, իրականացվել են մի շարք միջոցառումներ, որոնց նպատակն է եղել արտաքին շուկաներում գովազդելու հայկական արտադրանքը և ձևավորելու հասարակական կարծիք (PR): 2024 թվականին առաջին անգամ գինի, ձուկ, ծաղիկ, ծխախոտ, պանիր և կաթնաշոռ են արտահանվել համապատաս-խանաբար Սինգապուր, ԱՄԷ, Կատար, Եգիպտոս, ԱՄԷ:	
		3.2 ՀՀ արտահանման ռազմավարության և կից ճանապարհային քարտեզի մշակում և իրականացում	ԱՄՆ ՄԶԳ «Տնտեսական հիմքեր՝ հանուն դիմակայուն Հայաստանի» ծրագրի աջակցությամբ մշակվել և ներքին շրջանառության փուլում է գտնվում Հայաստանի արտահանման 2025-2030թթ ռազմավարական ծրագիրը և միջոցառումների ծրագիրը:	Հայաստանի արտահանման 2025-2030թթ միջոցառումների ծրագիրը ներառում է 5 ռազմավարական նպատակների կատարմանն ուղղված 14 ծրագիր և 75 միջոցառում:	
4	Գյուղատնտեսության զարգացում, արտադրողականության բարձրացում և կայուն անասնահամաճ արակային և	4.1 Մշակաբույսերի սորտերի և հիբրիդների զարգացում, կենդանիների ցեղերի բարելավում, արտադրողականության աճ	➢**Մշակաբույսերի սորտերի և հիբրիդների զարգացման ուղղությամբ.** - Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (ՀԱԱՀ) Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոնում շարունակվել են ցորենի, գարու, հաճարի և ցորենաշորայի երաշտադիմացկուն սորտանմուշների, ինչպես նաև բարձր	Առանձնացվել և դաշտային արտադրական փորձարկման մեջ են աշնանացան ցորենի 14, գարու 7 և ցորենաշորայի 4 նմուշներ (սելեկցիոն գծեր): Արտադրական փորձարկման մեջ են պռասասոխի 3 կայուն գծեր:	

	բուսասանիտարական իրավիճակի ապահովում		ձմեռապահունակ սխտորի, սոխի և պռասասոխի բարձր բերքատու սորտերի ստացման աշխատանքները: Սորտափորձարկման է հանձնված գարու բազմաշար բարձր բերքատու նոր սորտանմուշ, որը գարեջրագործության համար կարող է հումք ծառայել:		
			- ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2024 թվականին իրականացվել են բանջարաբոստանային մշակաբույսերի թվով 16 նոր սորտերի և հիբրիդների ստացման ուղղությամբ աշխատանքներ:	Բանջարաբոստանային մշակաբույսերի թվով 16 նոր սորտերի և հիբրիդների ստացման ուղղությամբ իրականացված աշխատանքներ:	
			- «Երկրագործության գիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իրականացվել են տեղական, դասական սելեկցիայի եղանակով նոր սորտերի բուծում, տրամախաչումներ (հեռավոր և բարդ հիբրիդիզացիա), առանց ԳՁՕ օրգանիզմների առկայության և բնակլիմայական անկանխատեսելի մարտահրավերներին դիմակայող սորտերի ստացման աշխատանքներ: Նոր սորտերի ընտրության ժամանակ օգտագործվել են տեղական սորտեր և էնդեմիկ տեսակներ:	2024 թվականին շրջանացվել և պետական սորտափորձարման է հանձնվել աշնանացան ցորենի 1 սորտ:	
			- «Բույսերի սորտերի պահպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո 2024 թվականի մարտի 2-ից Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է «Բույսերի սորտերի պահպանության միջազգային միության» (UPOV) անդամ, որի արդյունքում ՀՀ-ում կապահովի այլ երկրների բուծողների իրավունքների պահպանությունը:	«Բույսերի սորտերի պահպանության միջազգային միության» (UPOV) անդամ:	

			Երկրագործության գիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իրականացվել են տեղական, դասական սելեկցիայի եղանակով նոր սորտերի բուծում, տրամախաչումներ (հեռավոր և բարդ հիբրիդիզացիա), առանց ԳՁՕ օրգանիզմների առկայության և բնակլիմայական անկանխատեսելի մարտահրավերներին դիմակայող սորտերի ստացման աշխատանքներ: Նոր սորտերի ընտրության ժամանակ օգտագործվել են տեղական սորտեր և էնդեմիկ տեսակներ: Իրականացված միջոցառումների արդյունքում ստացվել է 60.8 տոննա աշնանացան ցորենի սերմացու: ➢ **Կենդանիների ցեղերի բարելավման և արտադրողականության աճի ուղղությամբ.** - ՀԱԱՀ Գյուղատնտեսական կենդանիների սելեկցիայի, գենետիկայի և կերակրման հետազոտական կենտրոնում իրականացվող հետազոտություններն ուղղված են խոշոր և մանր եղջերավոր կենդանիների ցեղերի բարելավմանը: - Այծաբուծության և ոչխարաբուծության ոլորտներում. • իրականացվել են ստացված սերնդի գնահատում՝ ըստ բոնիտացման ցուցանիշների, • այծերի առաջին զուգավորումն իրականացվել է ոչ թե ավանդական՝ 18 ամսականում, այլ 10-11 ամսական հասակում, • ստուգիչ կիթերի միջոցով որոշվել է այծամայրերի կաթնային մթերատվությունը, • իրականացվում են աշխատանքներ ստացված արդյունքների վերլուծության և		

			գիտական աշխատանքի հրապարակման ուղղությամբ: - Իրականացվել է մանր եղջերավոր կենդանիների կաթնային արտադրողականության ցուցանիշները բնութագրող գեների պոլիմորֆիզմի հետազոտում՝ ըստ մշակված մեթոդի: Համաձայն որի՝ վաղ հասակում շիշակների զուգավորումը հնարավորություն է ընձեռում մաքիներին օգտագործել հավելյալ ևս մեկ տարի, որը նպաստում է բուծման արդյունավետության բարձրացմանը: - Տոհմային գործի բարելավման նպատակով նախարարության կողմից իրականացվել են 2 պետական օժանդակության ծրագրեր, որոնք - միտված են եղել արտերկրից համաշխարհային ճանաչում ունեցող դասական ցեղերի տոհմային կենդանիների ներկրման աջակցությանը:	Տոհմային տավարաբուծության ծրագրի շրջանակներում 2019-2024 թվականների ընթացքում հանրապետություն է ներկրվել 2343 գլուխ հոլշտին, սիմենթալ, շվից, ջերսեյ, մոնբելյարդ և անգուս ցեղերի տոհմային երինջներ, որոնցից ստացվել է ավելի քան 9700 գլուխ բարձրարժեք սերունդ: Դրան զուգահեռ հանրապետությունում արդեն իսկ առկա շուրջ 10000 գլուխ տոհմային կենդանիներից այդ տարիների ընթացքում ստացվել է ևս շուրջ 45500 սերունդ, կամ ակնկալվում է, որ 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրապետության տավարի ընդհանուր գլխաքանակի 11.2%-ը կկազմեն մաքրացեղ տոհմային կենդանիները: «Հայաստանի Հանրապետությունում 2019-2023	

				թվականների ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման աջակցության» ծրագիրն ավարտվել է 2023 թվականին, որի շրջանակներում հանրապետություն է ներկրվել 1132 գլուխ բարձր պտղատվությամբ և մսային հատկանիշներով օժտված՝ դորփեր, բլանշ, ռոմանովյան և այլ ցեղերի տոհմային ոչխարներ: Ներկրված կենդանիներից և հանրապետությունում 2024 թվականին առկա տոհմային կենդանիներից ստացվել է շուրջ 80500 մաքրացեղ և խառնացեղ կենդանիներ, ինչը կազմում է հանրապետությունում առկա մանր եղջերավոր կենդանիների ընդհանուր գլխաքանակի 11.5%: Հոլշտին ցեղի գենոֆոնդի օգտագործման արդյունքում ստեղծվել են տավարի խառնացեղերի սինթետիկ պոպուլյացիաներ, որոնց օրական կաթնատվությունը շուրջ 20 կգ է, դիմացկուն են, լավ են օգտագործում արոտները: Շիրակի մարզի Կրաշեն համայնքի Այծաբուծական տնտեսությունում կաթնային ուղղության Զաանենյան ցեղի այծերի լակտացիայի ընթացքում միջին կաթնատվությունը կազմել	

			Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի օգոստոսի 22-ին N 1392-Լ որոշմամբ հաստատված «Մթերատվության բարձրացման փորձնական» ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է սերմնավորել 29480 գլուխ կով:	է գրեթե 470 կգ՝ տեղական այծերի 120-150 կգ կաթնատվության դիմաց: 2024 թվականին իրականացվել է շուրջ 16000 գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորում	
		4.2 Տեղական սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման միջոցառումների իրականացում	• ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել է. • ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեկտեմբերի 1-ի դրությամբ իրականացվել է. - բանջարաբոստանային սերմերի արտադ-ություն՝ 139 կգ, - բանջարաբոստանային սածիլների արտադ-ություն՝ 420 000 հատ,	- 15099.4 տոննա սերմերի լաբորատոր փորձարկումներ, որից 59.6 տոկոսը կազմել է տեղական արտադրության սերմերը, իսկ 40.4 տոկոսը՝ ներկրված, - Լաբորատոր փորձաքննու-թյան է ենթարկվել 575 նմուշ, - 2024 թվականի ընթացքում տրամադրվել են թվով 73 հավաստագրեր՝ տեղական արտադրության 2461.3 տոննա սերմերի համար, որից՝ 1164 տոննա աշնանացան և գարնանացան ցորեն և գարի, 16.03 տոննա բանջարաբոստա-նային, ընդեղեն և յուղատու մշակաբույսեր, 1173.7 տոննա կարտոֆիլ, - Տրամադրվել են 47409 զույգ պիտակներ, որից նախահիմնա-յին՝ 204 զույգ, հիմնային՝ 25536 զույգ և 21669 զույգ առաջին	

				վերարտադրության սերմերի համար, - Շրջանացման համար ներկայացված բանջարաբոստանային մշակաբույսերի նոր սորտերի քանակը կազմում է 16:	
			- ՀՀ տարբեր բնակլիմայական գոտիներում շրջանացման համար ներկայացվել են ՀՀ տեղական արտադրության, փոփոխվող կլիմայական պայմաններին հարմարված (չորադիմացկուն, տոթադիմացկուն) բանջարաբոստանային մշակաբույսերի թվով 16 սորտ, ներմուծված 20 և ավել սորտերի փորձարկման աշխատանքները շարունակվում են: • Հյուսվածքային բազմացման (in vitro) մեթոդներով շարունակվում է կարտոֆիլի մեծ պահանջարկ ունեցող 4 շրջանացված սորտերի (in vitro) բուսակների ստացման աշխատանքները, որոնք գտնվում են կտրոնավորման և բազմացման լաբորատոր փուլում, որն ունենալու է շարունակական բնույթ՝ սերմնաբուծական ցիկլը շարունակելու նպատակով: • Ավարտվել է բուսակներից վիրուսազերծ և առողջ mini պլարների ստացման համար նախատեսված ՀՀ Արմավիրի մարզում 2000մ^2 ջերմատան կառուցումը, որտեղ արդեն սկսվել է 2000 հատ in vitro բուսակների տնկումը և վերջիններս գտնվում են պահեստավորման մեջ (3000 հատ): 3 ամսից սպասվում է մինի	Ձմեռային պահեստավորման է դրվել 7 տ սուպեր էլիտա՝ գարնանը ստացված 3000 մ2-ում տնկված կարտոֆիլի 9 սորտերի սուպեր-էլիտայի ցանքից: 2025 թվականին այն կտնկվի 1,6 հա-ի վրա էլիտա ստանալու նպատակով: Ձմռան պահպանության է դրվելու 7000 մինի պալար, որոնք ստացվել են ջերմատանը երկու ցիկլով աճեցված 4000 (2000+2000) in vitro բուսակներից: Աշխատանքները շարունակվելու են ամբողջ տարվա ընթացքում, որպեսզի 2025 թվականի գարնանը առնվազն 20000 հատ մինի պալարներ տնկվեն բաց դաշտում սուպեր-	

			պալարների առաջին խմբաքանակի ստացումը: • Տնկանյութի հավաստագրման համակարգի ներդրման իրականացման նպատակով 2022 թվականի սեպտեմբերի 14-ին ընդունվել և 2023 թվականի հոկտեմբերի 5-ին ուժի մեջ է մտել «Սերմերի և տնկանյութի մասին» ՀՀ օրենքը, ընդունվել են թվով 13 ենթաօրենսդրական իրավական ակտեր, հիմնվել է կենսաքիմիական լաբորատորիայի բաղադրիչներից մեկը, մշակվել են հրահանգ-ուղեցույցներ: Հավաստագրման գործընթացների թվայնաց-ման անհրաժշտության վերաբերյալ հիմնավորումները ներկայացվել է Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն և ընդհանուր առմամբ դրանց իրագործման վերաբերյալ առկա է դրական դիրքորոշում: Միաժամանակ տեղեկացվում է, որ «Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» ՊՈԱԿ-ին տնկանյութի հավաստագրման գործառույթի վերապահման նպատակով ընդունվել է ՀՀ կառավարության 2024 թվականի հուլիսի 18-ի N 1124-Ն որոշումը:	սուպեր էլիտա ստանալու նպատակով: 2024 թվականի հունվարի 1-ից գործարկվել է «Խաղողի տնկանյութ» ազգային ստանդարտը, իսկ «Ծիրանենու տնկանյութ» և «Մորենու (ազնվամորենի) և մոշենու (անփուշ մոշենի) տնկանյութ» ազգային ստանդարտները կգործարկվեն 2025 թվականի հունվարի 1-ից: 2025 թվականին նախատեսվում է ևս 3 ազգային ստանդարտների մշակում:	
		4.3 Գյուղատնտեսական տեխնիկայի և ագրոպարենային ոլորտի սարքավորումների արդիականացում	ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 893-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրի շրջանակներում շարունակվում է մատչելի	Ծրագրի շրջանակներում 2024 թվականին հաստատվել է 149 լիզինգի հայտ շուրջ 5.0 մլրդ դրամի չափով, որոնց շրջանակներում ձեռք է բերվել 429 միավոր սարքավորում, իսկ	

			մեխանիզմների կիրառմամբ ագրոպարենային ոլորտի սարքավորումների տրամադրումը տնտեսավարողներին: Ծրագիրն իրականացվում է 2018 թվականից և նախատեսվում է իրականացնել նաև միջնաժամկետ ժամանակահատվածում: ՀՀ կառավարության 2022 թվականի հունվարի 27-ի N 105-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագրի շրջանակում շարունակվում է մատչելի մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսական տեխնիկայի տրամադրումը գյուղատնտեսութամբ զբաղվող տնտեսավարողներին: Ծրագիրը իրականացվում է 2017 թվականից և նախատեսվում է իրականացնել նաև միջնաժամկետ ժամանակահատվածում:	տրամադրված սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 3.4 մլրդ դրամ: Հայաստանի Հանրապետու-թյունում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցու-թյան ծրագրի շրջանակում 2024 թվականին ձեռք է բերվել 920 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 242 միավոր տրակտոր: Լիզինգի գումարը կազմել է շուրջ 3.1 մլրդ դրամ:	
		4.4 Անասնաբուծության և թռչնաբուծության զարգացման միջոցառումների իրականացում	• «Հայաստանի Հանրապետությունում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման» ծրագիրը, որի նպատակն է աջակցել արտերկրից համաշխարհային ճանաչում ունեցող դասական ցեղերի տոհմային կենդանիների ներկրմանը: • Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի օգոստոսի 22-ին N 1392-Լ որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում անասնաբուծության խթանման ծրագրերը», որտեղ ներառված են «Մթերատվության բարձրացման փորձնական», «Ոչխարաբուծության և այծաբուծության	• Ծրագրի շրջանակներում 2019-2024 թվականների ընթացքում 50 շահառուի կողմից ձեռք է բերվել 2343 գլուխ հոլշտին, սիմենթալ, շվից, ջերսեյ, մոնբելյարդ և անգուս ցեղերի տոհմային կենդանիներ, որից 217 գլուխը ձեռք է բերվել 2024 թվականին:	

			զարգացման 2024-2028 թվականների» և «Մեղվաբուծության զարգացման փորձնական» ծրագրերը: «Մթերատվության բարձրացման փորձնական» ծրագրի նպատակն է հանրապետության Գեղարքունիքի, Շիրակի, Սյունիքի, Տավուշի և Արագածոտնի մարզերում բուծվող կովերի 30%-ը արհեստական սերմնավորման գործընթացում ընդգրկելը, որի արդունքում նշված մարզերում տարեց-տարի կավելանան կաթի և մսի արտադրության ծավալները: «Ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման 2024-2028 թվականների» ծրագրի ավարտից հետո նախատեսվում է ստանալ տարեկան շուրջ 20 հազար գլուխ բարձր մթերատու և տոհմային հատկանիշներով օժտված սերունդ: Ընդհանուր առմամբ, գրեթե 25%-ով կավելանան ոչխարաբուծությունից և այծաբուծությունից ստացվող արտադրանքի ծավալները կամ տարեկան լրացուցիչ կարտադրվի շուրջ 3.5 մլրդ ՀՀ դրամ արժեքով ոչխարաբուծական և այծաբուծական արտադրանք: «Մեղվաբուծության զարգացման փորձնական» ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել 100000 մեղվափեթակ, որի պարագայում տարեկան հավելյալ կարտադրվի շուրջ 120000 կգ բարձրորակ ապրանքային մեղր: • Հանրապետությունում անասնաբուծության խթանման նպատակով մշակվել և շրջանառության փուլում են գտնվում «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ	• Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է սերմնավորել 29480 գլուխ կով: • Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է ձեռք բերել 10000 գլուխ կենդանի: • Տարեկան հավելյալ կար-տադրվի շուրջ 120000 կգ բարձրորակ ապրանքային մեղր: • Ծրագրի շրջանակում կնքվել է ծրագրի մասնակցության 6 պայմանագիր, կառուցվել և տեխնոլոգիապես ապահովվել է	

			վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման աջակցության 2025-2028 թվականների և Հայաստանի Հանրապետությունում 2025-2029 թվականների տավարաբուծության զարգացման ծրագրերը: • Պարենային անվտանգության և անասնաբուծական արտադրանքի ինքնաբավության մակարդակի բարձրացման, անասնաբուծության ճյուղում ներդրումների ավելացման, տեղական արտադրության խթանման, ճյուղի գրավչության մակարդակի բարձրացման նպատակով ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 3-ի N 276-Լ որոշմամբ հաստատվել է ՀՀ անասնաբուծության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրերին աջակցության տրամադրման փորձնական ծրագիրը: • 2022 թվականի նոյեմբերից ներդրվել և գործարկվել է «Հայաստանի Հանրապետությունում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալում և հաշվառում» ծրագիրը: 2024 թվականի մայիսի 30-ի N 818-Լ որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման ծրագիրը և միջոցառումների կատարման ժամանակացույցը»: • 2025 թվականին մեկնարկելու է մանր եղջերավոր կենդանիների համարակալման և հաշվառման միջոցառումը, որի շրջանակներում նախատեսվում է համարակալել և հաշվառել 1158164 մանր եղջերավոր կենդանի: Այդ նպատակով	թվով 7 խելացի անասնաշենք, պետական աջակցության ընդհանուր չափը կազմել է 86.8մլն դրամ: • Ծրագրի շրջանակում 2024 թվականին 1 շահառուի տրամադրվել է 2.3 մլրդ ՀՀ դրամի փոխհատուցում՝ 12.4 մլրդ դրամ ծավալով փաստացի ներդրումներ կատարելու դիմաց: Միաժամանակ հայտնում եմ, որ 4 շահառուի կողմից ներկայացվել է 4 մասնակցության հայտ (ըստ ներկայացված ներդրումային նախագծերի ներդրումների ընդհանուր ծավալը կազմելու է՝ 38.6 մլրդ դրամ), որից 2024 թվականին 3 շահառուի, իսկ 2025 թվականին 1 շահառուի հետ կնքվել է մասնակցության պայմանագիր: • 2024 թվականին համարակալվել և հաշվառվել է 195400 գլուխ խոշոր եղջերավոր կենդանի, որը կազմում է տարեկան պլանի 100%-ը: • Նախատեսվում է ձեռք բերել 2316328 զոյգ/հատ ականջապիտակ՝ մանր եղջերավոր կենդանիների	

			գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարված մրցույթը կայացել է: • Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի մարտի 3-ի N 276-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում անասնաբուծության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրերին աջակցության տրամադրման փորձնական» ծրագրի շրջանակներում թռչնաբուծության ուղղությամբ ներդրումներ իրականացնելու նպատակով մասնակցության պայմանագիր է կնքվել թվով 3 ընկերությունների հետ: Համաձայն վերջիններիս կողմից ներկայացված ներդրումային նախագծերի՝ ընդհանուր նախատեսվող ներդրումների ծավալը կազմում է 19.6 մլրդ ՀՀ դրամ:	համարակալման և հաշվառման նպատակով:	
		4.5 Բույսերի պաշտպանության միջոցառումների ծրագրի իրականացում	«Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն» ծրագրի շրջանակներում 2024 թվականի ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից բույսերի հիվանդությունների, վնասատուների և մկնանման կրծողների հայտնաբերման նպատակով, Հայաստանի Հանրապետության համայնքների շուրջ 242500 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում իրականացվել են մոնիթորինգի աշխատանքներ, որոնց արդյունքների հիման վրա Հայաստանի Հանրապետության մարզերի առավել վարակված շուրջ 107187 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում մկնանման կրծողների,	Իրականացված միջոցառումների արդյունքում 80-90 %-ով կրճատվել է վնասակար օրգանիզմների տարածման արեալները և վերջիններիս կողմից գյուղատնտեսական մշակաբույսերին հասցվող վնասի չափը:	

			ծղրիդների դեմ պայքարի աշխատանքներ իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության մարզերին անհատույց տրամադրվել են մկնասպան և միջատասպան թունանյութեր:		
		4.6 Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման ծրագրի իրականացում	2024 թվականի ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից Հայաստանի Հանրապետության մարզերում գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի ագրոքիմիական հետազոտությունների իրականացման նպատակով վերցվել է 32200 հատ հողանմուշ, իրականացվել են լաբորատոր փորձաքննություններ՝ հողում մակրո և միկրոտարրերի քանակները որոշելու նպատակով և համայնքներին տրամադրվել է 85 ագրոքիմիական քարտեզ:	2024 թվականի ընթացքում վերցվել է 32200 հատ հողանմուշ, իրականացվել են լաբորատոր փորձաքննություն-ներ՝ հողում մակրո և միկրոտարրերի քանակները որոշելու նպատակով և համայնքներին տրամադրվել է 85 ագրոքիմիական քարտեզ:	
		4.7 Մատուցվող անասնաբուժական ծառայությունների ընդլայնում, բարելավում և մարզային լաբորատորիաների վերազինում	Հայաստանի ազգային ագրարային համալսարանի անասնաբուժության և անասնաբուժական սանիտարական փորձա-քննության հետազոտական կենտրոնում կա-տարվում է գյուղատնտեսական կենդանիների ու թռչունների վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների տարածվածության ուսումնասիրություն, իրականացվում են բուժկանխարգելիչ միջոցառումներ, հետազոտվում է մակաբուծային հիվան-դություններով ախտահարված խոշոր և մանր եղջերավոր կենդանիների մսի և ենթամթերքի սննդային արժեքը: Միաժամանակ հայտնում եմ, որ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող գյուղատնտեսական կենդանիների	Ծրագրի շրջանակներում իրականացվել է թվով 5 040 753 հատ կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառում, որից՝ 849 693 հատ ախտորոշիչ միջոցառում՝ բրուցելոզ՝ 826 922 հատ, լեյկոզ՝ 5000 հատ, տուբերկուլյոզ՝ 17 771 հատ, և 4 191 060 հատ կանխարգելիչ միջոցառում՝ դաբաղ 1 914 099 հատ, սիբիրախտ՝ 843 065 հատ, էմկար՝ 860 057 հատ, հանգուցավոր մաշկաբորբ՝ 230 139 հատ, ծաղիկ՝ 343 700 հատ:	

			պատվաստման ծրագրի շրջանակներում իրականացվում են ախտորոշիչ և կանխարգելիչ միջոցառումներ: Մարզային 5 անասնաբուժական կառույց-ներում կատարվել են նյութատեխնիկական բազայի արդիականացված աշխատանքներ:		
		4.8 Հողային ռեսուրսների նպատակային և ջրային ռեսուրսների խնայողական ու արդյունավետ օգտագործում	• Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023-2025 թվականների ծրագրի շրջանակում 2024 թվականին կնքվել է 2 պայմանագիր՝ 10-30 հա և 30-100 հա մակերեսներով հողերի միավորման համար: • 2024 թվականի հունիսի 14-ի N 875-Լ որոշմամբ հաստատվել է Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023-2025 թվականների ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Կառավարության որոշումը, որով նախատեսվում է առնվազն 5 հա գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման դեպքում փոխհատուցել ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ պայմանագիր կնքելուց հետո ձեռք բերված առանձին գույքային միավոր հանդիսացող հողամասերի կադաստրային արժեքի 30%-ի	Ծրագրի շրջանակում 2024 թվականին կնքվել է 2 պայմանագիր՝ 10-30 հա և 1 պայմանագիր՝ 30-100 հա մակերեսներով հողերի միավորման համար: Ծրագրի շրջանակում կնքվել է ևս 9 պայմանագիր՝ 5-30 հա մակերեսով հողերի միավորման համար և 1 պայմանագիր՝ 30-100 հա մակերեսով հողերի միավորման համար:	

			չափով, ինչպես նաև պետական աջակցություն ստանալու համար միավորված հողամասի հանրագումարային մակերեսը պետք է կազմի առնվազն 5 հա, ընդ որում՝ աջակցությունը տրամադրվում է ոչ ավելի, քան 200 հա-ի (ներառյալ) համար: Միավորված հողամասի ընդհանուր մակերեսում՝ առանձին գույքային միավոր հանդիսացող հողամասերի միավորների քանակը պետք է լինի 5-30 հա միավորված հողամասի դեպքում առնվազն 5 միավոր, 30-100 հա միավորված հողամասի դեպքում առնվազն 10 միավոր, 100-200 հա միավորված հողամասի դեպքում՝ առնվազն 20 միավոր: • ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2025թթ. ծրագրի շրջանակում 2024 թվականին վարկային և փոխհատուցման բաղադրիչներով կնքվել են շուրջ 310 հա ընդհանուր մակերեսով հողատարածքներում ոռոգման արդիական համակարգերի ներդրման պայմանագրեր, իսկ ծրագրի շրջանակներում կնքված պայմանագրերի համար տրվել է շուրջ 326 հա-ի փոխհատուցում: Միևնույն ժամանակ ինտենսիվ այգեգործության զարգացման աջակցության ծրագրերի շրջանակում 2024 թվականին հաստատվել է շուրջ 1350 հա-ի այգեհիմնման հայտ, որը ներառում է նաև ոռոգման արդիական համակարգերի ներդրում:	Ծրագրի շրջանակում 2024 թվականին վարկային և փոխհատուցման բաղադրիչնե-րով կնքվել են շուրջ 310 հա ընդհանուր մակերեսով հողա-տարածքներում ոռոգման ար-դիական համակարգերի ներդրման պայմանագրեր, իսկ ծրագրի շրջանակներում կնքված պայմանագրերի համար տրվել է շուրջ 326 հա-ի փոխհատուցում: Միևնույն ժամանակ ինտենսիվ այգեգործության զարգացման աջակցության ծրագրերի շրջանակում 2024 թվականին հաստատվել է շուրջ 1350 հա-ի այգեհիմնման հայտ, որը ներառում է նաև ոռոգման արդիական համակարգերի ներդրում:	

			• ՀՀ պետական բյուջեի 1086 ծրագրի «Զարգացման ֆրանսիական գործակալության աջակցությամբ ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում ժամանակակից պահանջներին համապատասխան ոռոգման համակարգերի ներդրման և զարգացմանն աջակցություն» 12003 միջոցառման ճշտված տարեկան բյուջեն կազմում է 136695.00 հազար դրամ: Նախատեսվում է նաև ձեռք բերել գույք և տեխնիկա մարզային աջակցող թիմերի (AEST) համար: Այս միջոցառման շրջանակներում նաև նախատեսվում է իրականացնել ֆիլտրացիոն կայանների ձեռքբերում, որի համար պայմանագրերի նախագծերի վերաբերյալ ստացվել է Զարգացման ֆրանսիական գործակալության հաստատումը, պատրաստվում է փաթեթը ներկայացնել կառավարման խորհրդի հաստատմանը:		
		4.9 Գյուղական համայնքների դպրոցներում գյուղատնտեսության վարման տեսական և գործնական կրթական ծրագրերի փորձնական ներդրում, դպրոցական այգիների և ջերմոցների հիմնում	«Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» (ԴՍԵԲ) հիմնարկի աջակցությամբ 2023թ. սեպտեմբերից ՀՀ մարզերի մի շարք դպրոցներում ստեղծվել են խմբակներ:	2024թ. թվականի դրությամբ 31 դպրոցում ստեղծվել են «Նորարար ջերմատուն» և «Նորարար այգի» խմբակներ: Ներկայումս գործում են «Նորարար ջերմատուն» խմբակ, որն ունի 60 աշակերտ և 8 «Նորարար այգի» խմբակ, որտեղ հաճախում է 84 աշակերտ:	
5	Ապրանքների ներմուծման ռիսկերի կանխատեսում և պաշարների վաղաժամ կուտակում: Ներմուծվող	5.1 Ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողությունների իրականացում, ներառյալ ներմուծվող ապրանքների լոգիստիկ խափանումներով	• Նկատի ունենալով առաջին անհրաժեշտության պարենամթերքի ներմուծման մեծ կախվածությունը ՌԴ-ից՝ ներմուծման շուկաները դիվերսիֆիկացնելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից գնահատվել են ցորենի, եգիպտացորենի և բուսական յուղի այլ		

	ապրանքների մատակարարումների խափանումների ռիսկերի նվազեցում	պայմանավորված անբավարարության վաղաժամ կանխատեսում և կանխարգելում	երկրներից ներմուծման դեպքում դրանց արժեքի հնարավոր շեղումները Ռուսաստանի Դաշնությունից ներմուծվողի նկատմամբ: • ՀՀ-ԱՄՆ հարաբարությունների ընդլայնման և ՀՀ ներքին դիմակայությունն ամրապնդելու համատեքստում՝ ՀՀ-ում ցորենի ներկրման այլընտրանքային աղբյուրների վերաբերյալ խորհրդակցություններ անցկացնելու նպատակով Էկոնոմիկայի նախարարության կողմից կազմակերպվել են հանդիպումներ ԱՄՆ-ից Հայաստան այցելած աշխատանքային խմբի ներկայացուցիչների, մարզպետների, ցորենի սերմացու արտադրողների և ցորեն ներմուծողների ներկայացուցիչների մասնակցությամբ: ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ԱՄՆ-ի Կանզաս համալսարանի փորձագետների հետ համատեղ իրականացվել է Հայաստանի և ցորեն արտահանող մի շարք երկրների ցորենի շուկաների վերլուծություն և ներմուծման լոգիստիկ ծախսերի գնահատում: • ՎԶԵԲ-ի, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարության ֆինանսավորմամբ, Հայաստանի Ներդրումային խորհրդի համակարգմամբ մշակվել է Հայաստանի բեռնափոխադրումների երթուղիների վերլուծություն և արտահանման խթանման աջակցության մեխանիզմների մշակում, որի շրջանակներում իրականացվել է ՀՀ արտահանվող և ներմուծվող ապրանքների վերլուծություն, ինչպես նաև արտահանման բարձր ներուժ ունեցող ապրանքների ընտրություն հետագա ուսումնասիրություն, ներկայիս և հեռանկարային լոգիստիկ		

			երթուղիների համապարփակ վերլուծություն, արտահանման հետ կապված լոգիստիկ խնդիրների հաղթահարման ուղղությամբ ՓՄՁ-ների աջակցության մեխանիզմների վերաբերյալ առաջարկություններ և առաջարկվող աջակցության մեխանիզմների ազդեցության գնահատման տնտեսական մոդելավորում: • Հայաստանի կառավարության կողմից վարվող տնտեսության, այդ թվում՝ միջազգային հաղորդակցային ուղիների դիվերսիֆիկացման քաղաքականության իրականացման շրջանակներում սույն թվականի նոյեմբեր ամսին ՀՀ էկոնոմիկայի նախարարության և հայ գործարարների պատվիրակությունը այցելել է Իրանի Իսլամական Հանրապետություն: Այցելության ընթացքում կազմակերպվել է հանդիպում Չաբահար նավահանգստի գլխավոր տնօրենի, փոխնահանգապետի և ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալի գլխավորած պատվիրակության անդամների միջև, որի ընթացքում ներկայացվել է նավահանգստի կարողությունները, ենթակառուցվածքները և առևտրային հեռանկարները: Հայաստանցի մասնավոր ներդրողները ծանոթացել են նավահանգստում գործող պայմաններին, անդրադարձել հնարավոր համագործակցության հեռանկարներին: Աշխատանքային այցից հետո մասնավոր ընկերությունները կնքել են համագործակցության փոխըմբռնման հուշագրեր:		

6	Ռազմավարական գործընկեր երկրների հետ ինստիտուցիոնալ և անխափան կապերի հաստատում և ամրապնդում, արտաքին և ներքին մարտահրավերներին դիմակայելու պատրաստ համալրված նյութական պահուստի ձևավորում	6.1 Մասնակցություն ռազմավարական գործընկեր երկրների նյութական պահուստների կառավարումն իրականացնող գործադիր մարմինների միջև տարբեր ձևաչափերով ընթացող ինտեգրացիոն գործընթացներին	Իրականացվել է ԱՊՀ անդամ պետությունների բազային կազմակերպությունների նյութական պահուստի համակարգերի գիտատեխնիկական զարգացման, կադրերի վերապատրաստման և ուսուցման կազմակերպման ոլորտներում աշխատանքային պլանի նախագծի քննարկում: 2024 թվականի մայիսին հաստատվել է Ռոսռեզերվի նյութական պահուստի պահպանման խնդիրների հետազոտման ինստիտուտի Գիտա-կոնսուլտատիվ խորհրդի «ԱՊՀ տարածքում ինտեգրման զարգացում, պետական նյութական պահուստների համակարգերի արդյունավետության բարձրացման նորարարական մոտեցումների կիրառում» աշխատանքային պլանը: ԱՊՀ երկրների մասնակից պետությունների նյութական պահուստի կառավարում իրականացնող պետական (գործադիր) իշխանության մարմինների ղեկավարների Կոնսուլտատիվ Խորհրդի կողմից հաստատվել է ԱՊՀ տնտեսական զարգացման ռազմավարության իրականացման երկրորդ փուլի (2026-2030թթ.) գործողությունների պլանը: Սույն թվականի հոկտեմբերի 21-ից 25-ը կայացած տեսակոնֆերանսում, որին մասնակցել է նաև ՀՀ ՆԳՆ Պետական ռեզերվների գրասենյակի ներկայացուցիչը, քննարկվել է ԱՊՀ տնտեսական զարգացման ռազմավարության 1-ին փուլի (2026-2030թթ.) ծրագրի նախագիծը, ինչպես նաև նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին անցկացվելիք ԱՊՀ անդամ պետությունների կոնսուլտատիվ	ՆԳՆ Պետական ռեզերվների գրասենյակը հանդիսանում է ԱՊՀ երկրների մասնակից պետությունների նյութական պահուստի կառավարում իրականացնող պետական(գործադիր) իշխանության մարմինների ղեկավարների Կոնսուլտատիվ խորհրդի անդամ:	

			խորհրդի 2025 թվականի աշխատանքային պլանը: 2024 թվականի դեկտեմբերի 18-ից 19-ը անցկացվել է տեսակոնֆերանս ԱՊՀ տնտեսական զարգացման ռազմավարության 2-րդ փուլի (2026-2030թթ.) ծրագրի նախագծի քննարկման վերաբերյալ:		
		6.2 Նյութական պահուստում ներառված նյութական արժեքների անվանացանկերի վերանայում՝ բուսական յուղի, շաքարի և եգիպտացորենի (որպես անասնակեր) պարտադիր ներառմամբ:	ՀՀ Փոխվարչապետի հանձնարարականով ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի (գաղտնի) կողմից ներկայացված ամփոփ հաշվետվությունը, նյութական պահուստի նոր համակարգի հայեցակարգի նախագծերի փաթեթը՝ 2024 թվականի նոյեմբերի 1-ին ուղարկվել է ՀՀ Վարչապետի աշխատակազմ: Նախագծի վերանայման ընթացքում առաջացել է փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն, որի նպատակով գրություն է ներկայացվել Վարչապետի աշխատակազմ՝ Նախագիծը վերադարձնելու համար:	Նյութական պահուստի նոր մոդելի ձևավորում: Նյութական պահուստի նոր մոդելի ձևավորման համատեքստում կվերանայվեն և կմշակվեն ՀՀ-ին սպառնացող հնարավոր ճգնաժամային իրավիճակների սցենարները և դրանցից յուրաքանչյուրին հակազդման համար անհրաժեշտ ապրանքացանկերը, ինչպես նաև կապահովվի արտակարգ իրավիճակների ժամանակ պարենային արագ արձագանքման և ռիսկերի կառավարման մեխանիզմների ներդրումը: Նախատեսվում է նաև նյութական պահուստի պաշարների պահպանման, թարմացման, տեղափոխման գործընթացի մրցույթային կարգի պատվիրակում մասնավոր կազմակերպություններին: Կներդրվեն նաև նյութական պաշարների ձևավորման	
		6.3 Նյութական պահուստի կանոնակարգման օրենսդրական դաշտի վերանայում՝ պահուստի պաշարի ծավալների, դրանց ձևավորմանը, պահպանմանը և թարմացմանն ուղղված մեխանիզմների և ընթացակարգերի վերանայում:			

				գործընթացի վերահսկողության մեխանիզմներ: Արդյունքում ունենալով կոռուպցիոն ռիսկերի կանխարգելում և նվազեցում, ռեսուրսների արդյունավետ տեղաբաշխվածության ապահովում և պահպանության ծախսերի կրճատում, ինչպես նաև բնական կորուստի բացառում:	
7	Պատրաստի սննդի կորուստների կրճատում	7.1 Ճիշտ և առողջ սնուցման, ինչպես նաև պատրաստի սննդի կորուստների իրազեկման արշավների իրականացում	2024 թվականի 4-րդ եռամսյակի դրությամբ իրականացվել են ՀՀ մարզերի դպրոցների խոհարարների կարողությունների հզորացման դասընթացներ: «Դպրոցական սննդի առողջապահական նշանակությունը խոհարարների համար» մոդուլի շրջանակում ուսումնասիրել են թափոնների կառավարման, պատրաստի սննդի կորուստների կրճատման թեման: Միաժամանակ հայտնում եմ, որ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակման փուլում է գտնվում սննդի կորուստների վերաբերյալ տեղեկատվական գրքույկի նախագիծը, որն առաջիկայում կներկայացվի շահագրգիռ կողմերի կարծիքին:	Դասընթացներին մասնակցել են մարզային դպրոցների 516 խոհարար:	
		7.2 Դպրոցական սնունդ ծրագրի կրթական ենթաբաղադրիչում պատրաստի սննդի կորուստների կրճատման թեմայի ընդգրկում	Դպրոցական սնունդ ծրագրի կրթական ենթաբաղադրիչում ներառելու նպատակով ԴՍԵԲ հիմնարկի կողմից ուսումնասիրվում է թափոնների կառավարման, պատրաստի սննդի կորուստների կրճատման թեման: Մշակվում է պատրաստի սննդի կորուստների կրճատման վերաբերյալ օրենսդրական կարգավորումների նախագիծ:		

2. Պարենի մատչելիություն					
8	Սննդամթերքի գնաճի ցածր և կայուն մակարդակի ապահովում	8.1 Գնաճի ցածր և կայուն մակարդակի ապահովում	Կենտրոնական բանկը մշակում և իրականացնում է դրամավարկային քաղաքականություն՝ ուղղված երկրում գների կայունության նպատակի իրագործմանը: Վերոնշյալ նպատակի իրագործման շրջանակներում, այդ թվում հանրային հաշվետվողականության ապահովման համատեքստում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը եռամսյակային պարբերականությամբ պատրաստում և հրապարակում է գնաճի հաշվետվություններ (2024 թվականի չորրորդ եռամսյակի գնաճի հաշվետվությունը հրապարակվել է ս.թ. դեկտեմբերի 10-ին): Նշված փաստաթուղթը պարունակում է Ռազմավարության համապատասխան նպատակի իրագործման մասով անհրաժեշտ տեղեկատվություն:	2024 թվականի նոյեմբերին ՀՀ-ում 12-ամսյա գնաճը կազմել է 1.4%, իսկ պարենային ապրանքների 12-ամսյա գնաճը՝ -0.15%:	
9	Բնակչության գնողունակության մակարդակի բարձրացում	9.1 Նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների, կրթաթոշակների, ինչպես նաև նպաստների և սոցիալական այլ վճարների չափերի վերանայման նպատակով ֆիզիոլոգիական նորմերին համապատասխան ըստ տարիքային խմբերի նվազագույն պարենային զամբյուղի հաշվարկում և հաստատում	2024 թվականի հունիսի 14-ին կազմակերպվել է քննարկում ՀՀ առողջապահության, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների, ինչպես նաև ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Էկոլոգոնոոսֆերային հետազոտությունների կենտրոն ՊՈԱԿ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ՝ շահագրգիռ գերատեսչությունների գործառույթները հստակեցնելու և միջազգային փորձագետների ներգրավման անհրաժեշտությունը քննարկելու նպատակով: Քննարկման արդյունքների հիման վրա ՀՀ էկոնոմիկայի տեղակալ Ա. Խոջոյանը սույն		

			թվականի հունիսի 18-ի N 03/12137-2024 գրությամբ դիմել է ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության Բուդապեշտի գրասենյակի պատասխանատու Մարի Քեննիին՝ Կազմակերպության կողմից աջակցություն ստանալու խնդրանքով: Գրության արդյունքում նվազագույն պարենային զամբյուղի հաշվարկման, զամբյուղի ապրանքացանկի և նորմերի մշակման հարցում աջակցության տրամադրման հնարավորությունները քննարկվել են ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության Հայաստանյան գրասենյակի ղեկավարի և գլխամասային գրասենյակի ներկայացուցիչների հետ: Այնուհետև 2024 թվականի դեկտեմբերի 12-ին կայացած քննարկման ընթացքում ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության Բուդապեշտի գրասենյակի պատասխանատու Մարի Քեննին տեղեկացրել է աջակցության տրամադրման դրական դիրքորոշման մասին և հայտնել է, որ աշխատանքները կսկսվեն 2025 թվականի սկզբին:		

10	Բնակչության սոցիալական ապահովվածության և սոցիալապես խոցելի խմբերի հուսալի պաշտպանվածության ապահովումը	10.1 Շոկային իրավիճակներին արձագանքող սոցիալական պաշտպանության ծրագրի ներդրում (սոցիալական շտապօգնություն), ներառյալ՝ համապետական մասշտաբի սննդային քարտերի համակարգի գործարկում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի հունիսի 5-ի N 71-Ա/1 հրամանով Հայաստանի Հանրապետությունում գործարկվել է «Սոցիալական շտապ օգնություն» դրամաշնորհային ծրագիրը: Դրամաշնորհը տրամադրվում է կազմակերպությանը, որը պետք է համագործակցի նախարարության պատասխանատու ստորաբաժանման, Միասնական սոցիալական ծառայության և դրա տարածքային կենտրոնների, տեղական ինքնակառավարման մարմինների հետ, հավաքագրի անհրաժեշտ ապրանքատեսականի (բնաիրային), պահեստավորի այն և կազմակերպի դրանց բաշխումը սոցիալապես անապահով, դրա կարիքն ունեցող ընտանիքներին: 2024 թվականին միջոցառումը շարունակվել է: Դրամաշնորհի հատկացման մրցույթը հաղթել է «Հուսո տուն բարեգործական կենտրոն» հիմնադրամը: Ծրագրի իրականացման արդյունքում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, անհետաձգելի օգնության կարիք ունեցող անձանց (ընտանիքներին) տրամադրվել է բնաիրային օգնություն, ինչպես նաև սննդային քարտեր՝ գնահատված կարիքների հիման վրա: Կարիքները գնահատվում են նախօրոք մշակված պարենային անապահովության հարցաշարի միջոցով: Փաթեթների պարունակությունը, չափաքանակը և արժեքը նախապես համաձայնեցնվում են Աշխատանքի և սոցիալական հարցեի նախարարության պատասխանատու ստորաբաժանման հետ և բաշխվում են ըստ	2024 թվականին նախատեսվել է առնվազն 702 ընտանիքի տրամադրել աջակցություն, որից առնվազն 500–ը սննդային քարտի աջակցության տարբերակով: 2024 թվականին աջակցություն է տրամադրվել 900 ընտանիքների, այդ թվում 500-ը՝ սննդային քարտերի տեսքով: Միջոցառման շրջանակում ՀՀ պետական բյուջեի միջոցներից ծախսվել է 27,047,886 դրամ:	

			ընտանիքի անդամների թվի, կազմի և գնահատված կարիքի: 2024 թվականին ծրագիրն իրականացվում է Երևանում և ՀՀ Շիրակի, Գեղարքունիքի, Արմավիրի և Տավուշի մարզերում: ՀՀ պետական բյուջեից միջոցառման իրականացման համար 2024 թվականին հատկացվել է 27,054,316 դրամ: Նախատեսվում է ծրագրի աշխարհագրությունը հետագայում ընդլայնել:		
		10.2 Անապահովության գնահատման նոր համակարգի ներդրում	Անապահովության գնահատման նոր համակարգի ներդրման ուղղությամբ աշխատանքները շարունակվում են: Մասնավորապես, «Սոցիալական աջակցության մասին» օրենքի և հարակից օրենքների և «Պետական նպաստների մասին» օրենքի և հարակից օրենքների փաթեթներն ընդունվելուց հետո (2024թ. հոկտեմբերի 24), ներկայումս շրջանառվում է «Ընտանիքի անապահովության գնահատման կարգը, պայմանները, տվյալների ու դրանք տրամադրող պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ցանկը, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից տվյալներն ստանալու և տրամադրելու, անապահովության նպաստի և հրատապ օգնության նշանակման, վճարման և ավել վճարված գումարները վերադարձնելու ժամանակացույցը կազմելու կարգերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշումն	Նախատեսվում է նոր համակարգը փորձնական կիրառել 2 մարզերում, որից հետո գործարկել ՀՀ ամբողջ տարածքում:	

			ուժը կորցրած ճանաչելու, 2025 թվականի անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմը, անապահովության նպաստի և հրատապ օգնության չափերը, անապահովության նպաստի նվազագույն չափը սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284-Ն, 2014 թվականի ապրիլի 23-ի N 495-Ն, 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն, 2019 թվականի մայիսի 30-ի N 642-Ն, 2006 թվականի հուլիսի 27-ի N 1183-Ն, 2021 թվականի նոյեմբերի 4-ի N 1784-Ն, 2021 թվականի հուլիսի 15-ի N 1169-Ն, 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն, 2016 թվականի նոյեմբերի 3-ի N 1122-Ն, 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1105-Ն, 2024 թվականի հունիսի 27-ի N 1004-Ն, 2015 թվականի օգոստոսի 31-ի N 984-Ն, 2022 թվականի նոյեմբերի 10-ի N 1711-Ն, 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն, 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1061-Ն որոշումներում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախատեսվում է 2025 թվականին ՀՀ երկու մարզերում իրականացնել նոր համակարգի փորձարկում, որից հետո կներդրվի ՀՀ ամբողջ տարածքում:		

		10.3 Սոցիալական առաջնային կարիքների բավարարմանն ուղղված ոչ ֆինանսական ծառայությունների տրամադրում,	1. Սոցիալական առաջնային կարիքների բավարարմանն ուղղված ոչ ֆինանսական ծառայությունների տրամադրման աշխատանքները ևս շարունակվել են: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ԱՍՀՆ-ն, համագործակցելով Միավորված ազգերի կազմակերպության Պարենի համաշխարհային ծրագրի և Փախստականների գերագույն հանձնակատարի, «Դեմոքրասի ինթերնեյշնլ» միջազգային կազմակերպության հետ, Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց սննդապահովման նպատակով տրամադրել է սննդի փաթեթներ, ինչպես նաև կազմակերպել է վերջիններիս սննդապահովումը բարեգործական ճաշարանների միջոցով: Բացի նշված աջակցություններից, Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ՄԱԿ Պարենի համաշխարհային ծրագրի հետ համատեղ իրականացվել է նաև սննդի քարտերի տրամադրման միջոցառում: 2. Գործընկեր կազմակերպությունների հետ (Յունիսեֆ, «Մարդը կարիքի մեջ», Դեմոքրասի ինթերնեյշնլ, Հայկական Կարիտաս, «Աքթեդ», Սեյվ դը Չիլդրեն, այլ) համատեղ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց տրամադրվել են հագուստ, դեղորայք, հիգիենայի փաթեթներ, անհրաժեշտ կահույք կամ կենցաղային պարագաներ: Կարևոր է նշել, որ աջակցության նշված ձևերը տրամադրվել են ոչ միայն բնաիրային, այլ նաև աջակցության քարտերի (վաուչերների) միջոցով: 3.«Մարդը կարիքի մեջ» կազմակերպության հետ միասին նախարարությունն	1. Սննդի քարտեր են տրամադրվել շուրջ 21000 անձի: 2.Աջակցության այդ տեսակներից օգտվել է շուրջ 50.000 անձ: Սույն թվականի մայիսի 25-26-ին ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում տեղացած հորդառատ անձրևներով պայմանավորված հեղեղումների պատճառով տուժած 500 երեխայի UNICEF-ի և «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ-ի հետ համատեղ հատկացվել է հագուստի վաուչերներ: 3. Ծրագրից օգտվել է շուրջ 1000 ընտանիք՝ ինչպես ԼՂ-ից	

			իրականացրել է կոմունալ վարձավճարների փոխհատուցման ծրագիրը: Ծրագիրն ուղղված է եղել ձմեռային ամիսներին կոմունալ վարձերի վճարման դժվարություն ունեցող անձանց եռամյսա ժամկետում ամսական մինչև 30.000 ՀՀ դրամ փոխհատուցման տրամադրմանը:	տեղահանված, այնպես էլ տեղացի:	
		10.4 Սոցիալական խնդիրների լուծման նոր ձևաչափի գործարկում՝ խնդրի արձանագրումից մինչև դրա լուծումը:	Սոցիալական խնդիրների լուծման նոր ձևաչափի գործարկումը՝ խնդրի արձանագրումից մինչև դրա լուծումը, նախատեսվում է իրականացնել Անապահովության գնահատման նոր համակարգը ներդնելու միջոցով, որը նախատեսվում է «Ընտանիքի անապահովության գնահատման կարգը, պայմանները, տվյալների ու դրանք տրամադրող պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ցանկը, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից տվյալներն ստանալու և տրամադրելու, անապահովության նպաստի և հրատապ օգնության նշանակման, վճարման և ավել վճարված գումարները վերադարձնելու ժամանակացույցը կազմելու կարգերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու, 2025 թվականի անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմը, անապահովության նպաստի և հրատապ օգնության չափերը, անապահովության	Սոցիալական խնդիրների լուծման նոր ձևաչափերի գործարկման համար ԱՍՀՆ-ն գործարկել է հրատապ արձագանքման հարթակը, որը նախատեսված է հրատապ աջակցության կարիք ունեցող անձանց կարիքների հաշվառման նպատակով: Նույն հարթակը հնարավորություն է ընձեռում քարտեզագրել նաև հրատապ աջակցության կարիք ունեցող ընտանիքներին աջակցել ցանկացող կազմակերպությունների և անձանց ռեսուրսները, առաջարկվող ծրագրերը կամ ծառայությունները և նպատակուղղել դրանք հարթակում հայտագրված կարիքների բավարարմանը: ԱՍՀՆ-ն գործարկել է նաև տեղահանված անձանց կարիքների համալիր գնահատման թվայնացված գործիքը՝ նպատակ ունենալով	

			նպաստի նվազագույն չափը սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284-Ն, 2014 թվականի ապրիլի 23-ի N 495-Ն, 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն, 2019 թվականի մայիսի 30-ի N 642-Ն, 2006 թվականի հուլիսի 27-ի N 1183-Ն, 2021 թվականի նոյեմբերի 4-ի N 1784-Ն, 2021 թվականի հուլիսի 15-ի N 1169-Ն, 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն, 2016 թվականի նոյեմբերի 3-ի N 1122-Ն, 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1105-Ն, 2024 թվականի հունիսի 27-ի N 1004-Ն, 2015 թվականի օգոստոսի 31-ի N 984-Ն, 2022 թվականի նոյեմբերի 10-ի N 1711-Ն, 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն, 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1061-Ն որոշումներում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծն ընդունվելուց հետո: Այս համատեքստում, իրականացվել է գնահատման նոր համակարգի փորձարկում՝ առկա խնդիրներն ու թերությունները վեր հանելու և շտկելու նպատակով:	սոցիալական դեպքի վարման մեթոդաբանության շրջանակում գնահատել տեղահանված անձանց կարիքները և աջակցող ցանցի միջոցով կազմակերպել ու համակարգել այդ կարիքների բավարարման գործընթանցները:	
3. Պարենի օգտագործում					
11	Բնակչությանը լիարժեք և առողջապահական նորմերին համապատասխանող սննդով ապահովում: Սննդամթերքի որակի և անվտանգության	11.1 Առողջ սննդակարգի վերաբերյալ ուղեցույցների մշակում և դասընթացների կազմակերպում	Հաշվետու ժամանակահատվածում հանրակրթական դպրոցներում և բարձրագույն ուսումնական հաստատությունում իրականացվել են իրազեկման աշխատանքներ, մասնավորապես՝ թիրախային խմբերին տեղեկատվություն է ներկայացվել անվտանգ սնունդ ընտրելու սկզբունքների և սպառողների իրավունքների վերաբերյալ (իրազեկման դասեր են անցկացվել Երևան քաղաքի 5	5823 տնտեսավարող իրազեկվել է վտանգավոր սննդամթերքի մասին, 500 արտահանող տնտեսավարողի ծանուցվել է ուղեցույց արտահանման վերաբերյալ, 38 մեղվաբույծ-մեղր արտադրող տնտեսավարողի ծանուցվել է Եվրամիություն մեղր և	

	մակարդակի բարելավում:		դպրոցում, տեղեկատվական թերթիկներ են տեղադրվել Երևան քաղաքի տրանսպորտային միջոցների մեջ): ԴՍԵԲ հիմնարկի սննդաբանների կողմից մշակվել է դպրոցական սնունդ ծրագրի բալանսավորված սննդակարգով երկշաբաթյա ճաշացանկը և խոհարարի ուղեցույցը, որոնք, յուրաքանչյուր նոր ուսումնական կիսամյակի մեկնարկին նախընթաց վերանայում են:	մեղվաբուծական մթերք արտահանելու մասին: 2023-2024 թվականներին ՀՀ մարզերի դպրոցների կարողությունների զարգացման շրջանակում դասընթացներ են կազմակերպվել շուրջ 4818 անձի համար՝ տնօրեններ, վարչատնտեսական մասի համակարգողներ, խոհարարներ, ուսուցիչներ, դասվարներ:	
		11.2 Առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված միջոցառումների իրականացում	Առողջ ապրելակերպի՝ ներառյալ առողջ սնուցման, ֆիզիկական ակտիվության խթանման, ծխախոտի օգտագործման, ծխախոտի ծխի վնասակար ազդեցության, ալկոհոլի չարաշահման վնասների վերաբերյալ հանրային իրազեկման նպատակով: • Կազմակերպվել են հետևյալ միջոցառումները. 1. «Առողջ ապրելակերպի դեսպան» մրցույթ. Մրցույթի շրջանակներում դպրոցահասակ երեխաները ներկայացնում են «առողջ ապրելակերպ» թեմայով իրենց կողմից մշակված նախագծերը: Լավագույն նախագծերի հեղինակները հնարավորություն կունենան այցելելու առողջ ապրելակերպի ամառային ճամբար: 2. «Առողջ և ակտիվ ծերացում». Ավագ սերնդի շրջանում ֆիզիկական ակտիվության և հիշողության զարգացման խթանման խմբակները գործում են Երևան	• Կազմակերպվել է 24 հարցազրույց, 2 ասուլիս, պատրաստվել է 22 պաստառ և 1 սոցիալական հոլովակ, 15 մամուլի հաղորդագրություն, 15 տեսանյութ, որոնք տարածվել են բոլոր լրատվամիջոցներով, տեղադրվել ԱՆ պաշտոնական կայքում և սոցիալական էջերում: ➢ Առողջ ապրելակերպի արշավների շրջանակներում պատրաստվել են. ➢ Բաներներ՝ 21 հատ՝ «Առողջ ապրելակերպի թեմայով», ➢ Պաստառներ՝ 40 հատ՝ Առողջ ապրելակերպի տաղավարների կահավորանքի նպատակով (ճակատային և ետնահատվածների՝ 20-ական	

			քաղաքի 8 վարչական տարածքների 10 ակումբներում: Վերապատրաստված մասնագետները շաբաթական 2 անգամ վարում են ֆիզիկական ակտիվության խմբակներ ավագ սերնդի համար: Կազմակերպվում են նաև փորձագետների այցելություններ խմբակներին և իրականացվում է մասնակիցների իրազեկում առողջ ապրելակերպի մասին: 3. «Առողջ ապրելակերպի իրազեկման դպրոցական մարզային արշավներ». Կազմակերպվել են «Առողջ ապրելակորպի» մասսայական միջոցառումներ Հայաստանի Հանրապետության 10 մարզերում: Արշավի ընթացքում իրականացվել են հետևյալ միջոցառումները. ➢ Քայլերթ՝ մեկ-երկու կիլոմետր, ➢ Առողջ սննդի տաղավարներ, ➢ Սպորտլանդիա, ➢ Ֆիզիկական ակտիվության և գիտելիքի բարձրացմանն ուղղված թվով տաս խաղեր, ➢ Առողջ հոգի՝ հոգեկան առողջության ուղղված միջոցառումներ, ➢ Բերանի խոռոչի հիգիենայի ուսուցում, ➢ Մարմնի զանգվածի ինդեքսի որոշման ուսուցում, ➢ Սքրինինգային տաղավարներ, ➢ Առողջ ապրելակերպի պաստառների պրեզենտացիա, ➢ Ծխախոտի և նիկոտինպարունակող արտադրանքի վտանգը, ➢ Ալկոհոլի չարաշահման վտանգը, ➢ Շուրջպար:	պաստառներ տարբեր տեսակների), ➢ Ինֆորմացիոն թերթիկներ՝ 60 հատ, ➢ Թռուցիկներ՝ 28000 հատ. ➢ «Առողջ բաղադրատոմսեր»-ի վերաբերյալ բրոշյուրներ 2000 հատ: «Իմ առողջ համայնք» հետազոտական պրոյեկտի ներկայացում (5 պրոյեկտ)՝ 500 հատ, «Առողջ ապրելակերպի հետազոտական պրոյեկտ՝ 500 հատ, Ավագ սերնդի շրջանում ֆիզիկական ակտիվության խթանման» խմբակներ՝ 18000 հատ, «Հիշողության զարգացման ակումբներ»՝ 9000 հատ: • Թվով 8947 քաղաքացի ստա-ցել է հատուկ խորհրդատվություն ֆիզիկական ակտիվության և վերջինիս խթանման կարևորության վերաբերյալ:	

		4. «Ծխախոտի դեմ պայքարի» ազգային օրվա կապակցությամբ կազմակերպվել է երիտասարդներին ուղղված միջոցառում, որի ընթացքում երիտասարդները տեղեկացվել են ծխախոտ և նիկոտին պարունակող նոր արտադրատեսակների վնասների, նոր սպառողներ առաջացնելու նպատակով ծխախոտային արտադրության հնարքների, ինչպես նաև առողջ ապրելակերպի կարևորության վերաբերյալ. ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 5-ի «Բնակչության շրջանում ֆիզիկական ակտիվության խթանում» մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 3464-Ա հրամանով հաստատված մեթոդաբանությունը ներդնելու նպատակով 2018 թվականին ընտրվել է պիլոտային երկու (Արարատի և Արմավիրի) մարզ, որտեղ մարզպետարանների աջակցությամբ շարունակվել է աշխատանքը առաջնային օղակի բժիշկների հետ՝ բնակչության շրջանում ֆիզիկական ակտիվությունը խթանելու մեթոդաբանության ներդրման վերաբերյալ: 2024թ.-ին Արմավիրի մարզի 4839 և Արարատի մարզի 4108 քաղաքացի ստացել է հատուկ խորհրդատվություն առաջնային օղակի մասնագետների կողմից՝ ֆիզիկական ակտիվության և վերջինիս խթանման կարևորության վերաբերյալ:		
		11.3 Կերակրի աղում յոդի պարունակության շարունակական մոնիթորինգի իրականացում	Առողջապահության նախարարության կողմից իրականացվում է կերակրի աղում յոդի պարունակության շարունակական մոնիթորինգ:	Կերակրի աղի նմուշների հետազոտությունների արդյունքում արձանագրված շեղումների մասին տեղեկատվություն է	

			2024 թվականի ընթացքում պարբերաբար իրականացվել է կերակրի աղում յոդի պարունակության վերաբերյալ պետական վերահսկողություն:	ներկայացվում Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին՝ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու նպատակով: Իրականացվել է 489 լաբորատոր փորձարկում և հայտնաբերվել 47 անհամապա-տասխանություն:	
		11.4 Դպրոցներում սննդի և սնուցման հետ կապված միջոցառումների իրականացում	Դպրոցական սնունդ ծրագրի ամբողջական փոխանցումը ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրից Հայաստանի Հանրապետության կառավարությանը տեղի է ունեցել 2023 թվականին:	ՀՀ բոլոր 10 մարզերի հանրակրթական 1060 դպրոցների տարրական դասարանների շուրջ 105259 սովորողներ և 10 մարզերի նախակրթարանների 4114 սաներ ստանում են սնունդ: Նշված դպրոցներից 941-ում աշակերտները ստանում են տաք սնունդ:	
		11.5 Սննդամթերքում միկրոտարրերի (ֆոլաթթու և երկաթ) պարունակության գնահատում	ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Գիտական և գիտա-տեխնիկական ծրագրերի նպատակային-ծրագրային ֆինանսավորման» մրցույթին ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ քննարկումների և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կողմից ներկայացվել է «ՀՀ-ում միկրոսննդանյութերի ընդունման գնահատում և հանրային իրազեկման համար անհրաժեշտ գիտամեթոդական ապահովում» գիտական թեման:	ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 2060-Ն որոշմամբ հաստատվել է «ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի, միջոցառումների ցանկը, որի շրջանակներում ՀՀ ԳԱԱ էկոլոգոնոոսֆարեային կենտրոնին կտրամադրվի 15.6 մլն դրամաշնորհ՝ Սննդամթերքում միկրոտարրերի (ֆոլաթթու և երկաթ)	

				պարունակության գնահատում իրականացնելու նպատակով:	
		11.6 Սննդամթերքի առանձին տեսակներում վիտամիններով և միկրոտարրերով հարստացման ծրագրի մշակում	Նշված միջոցառումների իրականացման համար հիմք կարող են ծառայել վերոնշյալ ռազմավարության գործողությունների ծրագրի 11.5-րդ՝ «Սննդամթերքում միկրոտարրերի (ֆոլաթթու և երկաթ) պարունակության գնահատում» կետի միջոցառման արդյունք-ները: Միաժամանակ հայտնում եմ, որ ՀՀ-ն անդամակցում է Միավորված ազգերի կազմակերպությանը, որի՝ «Կայուն Զարգացման 2030 օրակարգի» 17 նպատակներից 2-րդն ուղղված է սովի և թերսնման բոլոր ձևերի վերացմանը: 2020 թվականի հուլիսի 10-ին հրապարակված՝ ՀՀ ազգային անվտանգության նոր ռազմավարության 7.20-րդ կետով սահմանված է, որ պետությունը գործուն քայլեր է ձեռնարկելու բնակչության բոլոր խմբերի համար առողջապահական նորմերին համապատասխանող, բազմազանեցված սննդամթերքի ֆիզիկական ու տնտեսական մատչելիությունն ապահովելու ուղղությամբ: Այնուամենայնիվ, ՀՀ-ում դեռ կան մի շարք բացեր, որոնք լուրջ խոչընդոտում են, որպեսզի ազգաբնակչության բոլոր խմբերը հասանելիություն ունենան առողջ աճի և զարգացման համար անհրաժեշտ հիմնական սննդանյութերին: Այս ուղղությամբ ծրագրերի արդյունավետ իրականացման տեսանկյունից անկյունաքարային նշանակություն ունի ոչ միայն ազգաբնակչության պարենային ապահովության, այլ նաև՝ թերսնման վիճակի		
		11.7 Սննդամթերքի վիտամիններով և միկրոտարրերով հարստացված ծրագրի ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացում			

			ցուցանիշների, մասնավորապես՝ միկրոսննդանյութերի ընդունման ուսումնասիրումը:		
12	Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժական և բուսասանիտարական անվտանգության համակարգերի պատշաճ մակարդակի ապահովում	12.1 «Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների մասին» օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական իրավական ակտերի մշակում և հաստատում	2023 թվականի հունվարի 17-ին ընդունվել է «Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների մասին» ՀՕ-11-Ն օրենքը, որի կիրարկումն ապահովելու նպատակով հաստատվել են. 1.ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 14-ի «Մեկուսացված համակարգում գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածության և անվտանգության ապահովման կարգը սահմանելու մասին» № 1541-Ն որոշումը, 2.ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 9-ի «Գիտահետազոտական, փորձացուցադրական աշխատանքների ներմուծման, արտահանման և ոչնչացման կարգը սահմանելու մասին» № 1545-Ն որոշումը, 3.ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 14-ի «Լաբորատոր փորձաքննության ենթակա բույսերի տեսակների ցանկը հաստատելու մասին» № 1571-Ն որոշումը, 4.ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 14-ի «Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածության և կենսաանվտանգության հետևանքով շրջակա միջավայրին, մարդու կյանքին և առողջությանը, գյուղատնտեսական նշանակության հողերին սպառնացող վտանգների կանխման և հասցված վնասների վերացմանն ուղղված միջոցառումների	2023 թվականի հունվարի 17-ին ընդունված «Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների մասին» ՀՕ-11-Ն օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով հաստատվել են ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 14-ի № 1541-Ն, 1558-Ն և 1571-Ն, նոյեմբերի 9-ի № 1545-Ն ՀՀ կառավարության որոշումները և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի օգոստոսի 30-ի N 161-Լ և դեկտեմբերի 4-ի N 2439-Ն հրամանները:	

			պետական ծրագիրը հաստատելու մասին» № 1558-Ն որոշումը: 5.ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 4-ի «Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների հարցերով փորձագիտական խմբի ձևավորման կարգը, իրավասությունները, պարտականությունները սահմանելու մասին» N 2439-Ն հրամանը, 6.ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի օգոստոսի 30-ի «Մեկուսացված համակարգում գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածման յուրաքանչյուր գործընթացի մշտադիտարկման չափանիշ-ներն ու կարգը, մշտադիտարկման մեթոդներն ու ուղեցույցները» N 161-Լ հրամանը:		
		12.2 Սննդամթերքի անվտանգության ապահովման նպատակով HACCP (վտանգի վերլուծության և կրիտիկական կետերի հսկում) սննդի անվտանգության համակարգի կամ ISO 22000 ստանդարտի ներդնման աջակցության ծրագրի մշակում	ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել և ՀՀ Արդարադատության նախարարության կարծիքին է ներկայացվել «Որակի և անվտանգության կառավարման համակարգերի և արտադրանքի համապա-տասխանության սերտիֆիկատների ստացման աջակցության ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը, որով նախատեսվում է ISO 22000, ISO 9001, ISO14001 **և** FSSC 22000, Global G.A.P. սերտիֆիկատների, ինչպես նաև վերջիններիս ներդրման խորհրդատվության տրամադրման ծախսերի փոխհատուցում: Նախագծի ընդունման դեպքում կարդիականացվեն ազգային արտադրողների բիզնես գործընթացները, կբարելավվի արտադրանքի որակը, կապահովվի արտադրանքի անվտանգությունը՝ համապատասխանելով ազգային և միջազգային լավագույն ստանդարտներին:	ՀՀ էկոնոմիկայի նախարարու-թյան կողմից մշակվել և ՀՀ Արդարադատության նախարա-րության կարծիքին է ներկայացվ-ել «Որակի և անվտանգության կառավարման համակարգերի և արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատների ստացման աջակցության ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը:	

			Սննդի շղթայում գործունեություն ծավալող կազմակերպություններում Վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի (ՎՎՀԿԿ(HACCP)) ներդրմանն աջակցելու նպատակով՝ ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի նախաձեռնությամբ կազմակերպվել է «ՎՎՀԿԿ-ի սկզբունքները որպես սննդամթերքի անվտանգության և մրցակցության հիմք» խորագրով սեմինար (EHEGD կազմակերպության աջակցությամբ): Սեմինարին մասնակցել են սննդամթերքի արտադրության ոլորտում գործունեություն իրականացնող այն տնտեսավարողները, որոնց մոտ անցկացված վերահսկողության ընթացքում պարզվել էր, որ ՎՎՀԿԿ համակարգ ներդրված չէ կամ կան դրա սկզբունքների էական խախտումներ: Սեմինարի նպատակն էր օգնել տնտեսավարողներին ստանալու գիտելիքներ այնպիսի թեմաներով, ինչպիսիք են նախապայմանային ծրագրերը, պատշաճ հիգիենիկ և արտադրական պրակտիկան, ռիսկի գնահատումն ու նախագծման պահանջները: Ներկայացվել են նաև սննդի արդյունաբերու-թյան ու անվտանգության ոլորտում խելացի և թվային համակարգերը, սարքավորումների սպասարկման նրբությունները և այլն: Եվրոպական Միության, TAIEX գործակալության և ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի հետ համատեղ կազմակերպած եռօրյա՝ «Վտանգի վերլուծության հսկման կրիտիկական կետեր»		

			թեմայով վերապատրաստման դասընթաց է կազմակերպվել Տեսչական մարմնի և ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակիցների համար:		
4. Պարենի ապահովվածության համակարգի կայունություն					
13	Տնտեսավարող սուբյեկտների անխափան գործունեության ապահովում	13.1 Ապահովագրական ամբողջական համակարգի ներդրման նպատակով հանրապետության 10 մարզերում գյուղատնտեսական մշակաբույսերի ապահովագրության պիլոտային ծրագրի իրականացում	ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 24-ի N 1485-Լ որոշմամբ իրականացվում է Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագիրը, որի շրջանակում իրականացվում է ապահովագրավճարի 50-60 %-ի սուբսիդավորում: Ծրագրի շրջանակում 2024 թվականին ապահովագրվել են դեղձ, սալոր, խնձոր, կեռաս, բալ, ձմերուկ, սեխ, կարտոֆիլ՝ կարկուտ ռիսկից, հացահատիկային մշակաբույսերը (ցորեն/գարի/վարսակ)՝ երաշտ ռիսկից:	2024 թվականի գյուղատնտեսական տարվա համար ԳԱԱԳ-ի կողմից տրամադրված տվյալների համաձայն, ապահովագրական ընկերությունների կողմից վաճառվել է 27 ապահովագրական պայմանագիր, համախառն ապահովագրավճարը կազմել է շուրջ 21.9 մլն դրամ: Կնքված պայմանագրերի արդյունքում ապահովագրված այգիների և ցանքատարածությունների մակերեսը կազմել է շուրջ 247 հա:	
14	Պարենապահովման և սննդամթերքի բաշխման համակարգի մշակում, ներդրում և դրանց անխափան ու արդյունավետ աշխատանքի ապահովում արտակարգ իրավիճակների պայմաններում	14.1 Արտակարգ իրավիճակների ժամանակ պարենային արագ արձագանքման և ռիսկերի կառավարման մեխանիզմների ներդրում	ՀՀ Փոխվարչապետի հանձնարարականով ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի (գաղտնի) կողմից ներկայացված ամփոփ հաշվետվությունը, նյութական պահուստի նոր համակարգի հայեցակարգի նախագծերի փաթեթը 2024 թվականի նոյեմբերի 1-ին Ներքին գործերի նախարարության կողմից ներկայացվել է ՀՀ Վարչապետի աշխատակազմ: Նյութական պահուստի նոր մոդելի ձևավորման համատեքստում կվերանայվեն և կմշակվեն ՀՀ-ին սպառնացող հնարավոր ճգնաժամային իրավիճակների սցենարները և դրանցից	Արդյունքում կունենանք ռիսկերի կանխարգելում և նվազեցում, ռեսուրսների արդյունավետ տեղաբաշխվածության ապահովում և պահպանության ծախսերի կրճատում, ինչպես նաև բնական կորուստի բացառում: Միաժամանակ հայտնում եմ, որ 2025 թվականին կմեկնարկի ԱՄՆ ՄԶԳ «Պարենային անվտանգություն» ծրագիրը, որի տևողությունը 5	

			յուրաքանչյուրին հակազդման համար անհրաժեշտ ապրանքացանկերը, ինչպես նաև կապահովվի արտակարգ իրավիճակների ժամանակ պարենային արագ արձագանքման և ռիսկերի կառավարման մեխանիզմների ներդրումը: Նախատեսվում է նաև նյութական պահուստի պաշարների պահպանման, թարմացման, տեղափոխման գործընթացի մրցույթային կարգի պատվիրակում մասնավոր կազմակերպություններին: Կներդրվեն նաև նյութական պաշարների ձևավորման գործընթացի վերահսկողության մեխանիզմներ:	տարի է, բյուջեն՝ 25-49.9 մլն ԱՄՆ դոլար: Ծրագիրը կփոխկապակցվի Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարության 2023-2026 թվականների գործողությունների ծրագրով սահմանված միջոցառումներին:	
15	Զարգացած լոգիստիկ ենթակառուցվածքներ և ագրոպարենային արտադրանքի իրացման աջակցության ծառայությունների մատուցում	15.1 Սպասարկման ժամանակակից ենթակառուցվածքներ, մատուցվող բարձրորակ ծառայություններ	- ՀՀ ԷՆ և Հայաստանի Ներդրումային խորհրդի կողմից, ՎԶԵԲ-ի և Միացյալ Թագավորության կառավարության աջակցությամբ մշակվել և էկոնոմիկայի նախարարություն է ներկայացվել ՀՀ-ում թարմ գյուղատնտեսական արտադրանքի մթերման և իրացման կենտրոնների (լոգիստիկ կենտրոնների) ստեղծման ռազմավարական քայլերը: Ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել և ներկայացվել են լոգիստիկ կենտրոնների տարբեր մոդելները, կառավարման մոտեցումները, լոգիստիկ կենտրոնների ձևավորմանն ուղղված տարբեր երկրների պետական քաղաքականությունը և իրականացրած քայլերը: Միաժամանակ ուսումնասիրվել է նաև միջազգային փորձը՝ օգտագործելով ինչպես գրասենյակային վերլուծության մեթոդը, (ներառյալ համապատասխան գրականության հայտնաբերում և ուսումնասիրություն), այնպես էլ տարբեր կառույցների և փորձագետների հետ խորը հարցազրույցի մեթոդաբանությունը,	- ՀՀ մարզպետարաններից ստացված՝ մարզերում 2024 թվականի ընթացքում միջազգային կառույցների աջակցությամբ կամ մասնավոր ներդրումներով ստեղծված, գործարկված, կառուցման փուլում գտնվող և առաջիկայում պլանավորված սառնարանային պահեստավորման վերաբերյալ տեղեկատվության համաձայն. 1)Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքում առկա է 15 սառնարանային պահեստ, կառուցման փուլում է գտնվում 4-ը, 2) Կոտայքի մարզի Ձորաղբյուր համայնքում առկա է 2 սառնարանային պահեստ, կառուցման փուլում է գտնվում 12-ը,	

			ինչպես նաև այլ երկրների նմանատիպ կառույցների հետ զրույցները: - Հայաստանի և Գերմանիայի միջև 2024 թվականին կայացած միջկառավարական խորհրդակցությունների ընթացքում առաջարկվել է քննարկել Մեծածախ շուկայի ստեղծման ներդրումային ծրագրի մշակման հարցում տեխնիկական աջակցության տրամադրման հնարավորությունը, և գերմանական կողմի հետաքրքրվածության արդյունքում ներկայացվել է մեծածախ շուկայի և լոգիստիկ կենտրոնի ստեղծման նախարարության կողմից առաջարկվող մոդելի անգլերեն տարբերակը:	3) Շիրակի մարզում կառուցման փուլում է գտնվում 2 սառնարանային պահեստ, 4) Արմավիրի մարզի Արմավիր համայնքում առկա է 1, Փարաքար համայնքում՝ 3, կառուցման փուլում է գտնվում 1 սառնարանային պահեստ, 5)Գեղարքունիքի մարզում առկա են 12 սառնարանային տնտեսություններ՝ 3446 տոննա ընդհանուր տարողությամբ: Ընդհանուր առմամբ ներկայումս ՀՀ-ում գործում է շուրջ 1619 սառնարանային պահեստ: Միաժամանակ հայտնում եմ, որ սառնարանային տնտեսությունների կառուցման կամ վերազինման նպատակով Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրի շրջանակներում 2024 թվականին հաստատվել է ՀՀ Արմավիրի, Կոտայքի, Արագածոտնի, Վայոց Ձորի և Արարատի մարզերի 12 շահառուի լիզինգի հայտ՝ 673.7 մլն դրամի չափով: - Ներկայումս հանրապետությունում գործում է գյուղատնտեսական ներդրանքներ, մասնավորապես՝ ագրոքիմիկատներ և թունաքիմիկատներ վաճառող 12 կազմակերպություն:	

				- Այսօրվա դրությամբ լոգիստիկ և շուկայավարման հիմնված կենտրոնների գործառույթներ է իրականացվում «Սպայկա» և «Արլեամ (Սորտստոր)» ՍՊԸ-ների կողմից: Կառուցման ավարտական փուլում է գտնվում «Ագրոպրո» ՓԲԸ-ի կողմից կառուցվող ժամանակակից արդիական տեխնոլոգիաներով հագեցած գյուղատնտեսական առաջնային արտադրանքի լոգիստիկ կենտրոնը, որը տեղակայված կիրականացնի թարմ մրգի սառեցման, պահեստավորման, տեսակա-վորման, փաթեթավորման և արտահանման գործառույթներ: Ընդհանուր ժամում 25 տոննա տեսակավորման և փաթեթա-վորման, 1800 տոննա երկարա-ժամկետ պահպանման և օրական մինչև 350 տոննա արտահանման, ինչպես նաև ժամում շուրջ 1500 հատ ստվարաթղթե տարաների արտադրության հզորություն: - Բացի այդ, Ասիական զարգացման բանկի կողմից ֆինանսավորվող Հայաստանում կլիմայական հարմարվող պարենային անվտանգության ուժեղացման ծրագրի (CAFSEP) շրջանակներում նախատեսվում	

				է գյուղատնտեսական արժեքա-յին շղթաների կապերն ուժեղացնելու համար կատարել երկու հնարավոր լոգիստիկ հանգույցների նախնական իրագործելիության ուսումնասիրություններ: Մշակվել է տեխնիկական առաջադրանքը և հայտարարվել մրցույթ:	
16	Պարենային անվտանգության համակարգի մարտահրավերներին համահունչ բարելավված որակավորում ունեցող կադրային ներուժ	16.1 Ագրոարդյունաբերական համալիրի համար անհրաժեշտ մասնագետների պատրաստում և, կարիքի դեպքում, ուսումնական ծրագրերի պարբերաբար վերանայում՝ տեխնիկական և տեխնոլոգիական զարգացումներին համապատասխան	Էկոնոմիկայի նախարարի 2023թ. նոյեմբերի 30-ի թիվ 2421-Լ հրամանով հաստատվել է պատվաստողների (վակցինատոր) պատրաստման կարգը: Էկոնոմիկայի նախարարության, «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի միջև 2024 թվականի փետրվարի 14-ին կնքվել է «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամում «Պատվաստող (վակցինատոր)՝ գյուղատնտեսական կենդանիների» պատրաստման հնգօրյա և վերահավաստագրման երկօրյա դասընթացների կազմակերպման N 51-24 եռակողմ պայմանագիրը: 2024 թվականի դրությամբ վերանայել է «Սպառողական ապրանքների փորձաքննություն» մասնագիտության «Պարենային ապրանքների որակի փորձագետ» որակավորման կրթական չափորոշիչը, մոդուլային ծրագրերը և ուսումնական պլանը, մշակվել է նաև	Եռակողմ պայմանագրի համաձայն 2024 թվականին «Պատվաստող (վակցինատոր)՝ գյուղատնտեսական կենդանիների» դասընթացներին ներգրավվել է 57 մասնակից, որից 15-ը ստացել է հավաստագիր, իսկ 42-ը՝ վերահավաստագիր: Վերանայել է «Սպառողական ապրանքների փորձաքննու-թյուն» մասնագիտության «Պարենային ապրանքների որակի փորձագետ» որակա-վորման կրթական չափորոշիչը, մոդուլային ծրագրերը և ուսումնական պլանը, մշակվել է	

			«Ապրանքների փորձաքննություն» ուսումնական ձեռնարկը: 2024 թվականից ՀԱԱՀ-ում իրականացվում է «Սննդամթերքի անվտանգություն» բակալավրիատի բարելավված կրթական ծրագիրը, «Պարենամթերքի տեխնոլոգիա» մագիստրոսական ծրագիրը, «Ձկնային տնտեսություն» միջազգային ծրագրի շրջանակներում ներդրված մագիստրոսական ծրագիրը:	նաև «Ապրանքների փորձաքննություն» ուսումնական ձեռնարկը: Աշխատանքային կիսամյակի արդյունքում ոլորտում աշխատանքի առաջարկ է ստացել 65 ուսանող, ներ է դրվել նոր մագիստրոսական ծրագիր:	
		16.2 Անասնաբույժ մասնագետների վերապատրաստում	2024 թվականի հունիսի 27-ին հաստատվել է «Անասնաբույժների որակավորում ունեցող մասնագետների վերապատրաստման կարգը հաստատելու մասին» N 995-Լ որոշումը, որի հիման վրա նախատեսվում է կազմակերպել անասնաբույժների վերապատրաստում: Միաժամանակ հայտնում եմ, որ Հայաստանի ազգային ագրարային համալսարանում ընթանում են հետևյալ դասընթացները՝ • «Կենդանիների վակցինատոր» մասնագիտական ուսուցման ծրագիրը: • «Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցություն» ուսուցման ծրագիր:	2024 թվականի հունիսի 27-ին հաստատված «Անասնաբույժների որակավորում ունեցող մասնագետների վերապատրաստման կարգը հաստատելու մասին» N 995-Լ որոշում: 2024 թվականին դասընթացին մասնակցել է 15 դիմորդ, իսկ դասընթացի մեկնարկից սկսած՝ 131 դիմորդ: Ծրագրի շրջանակում վերահաստատագրվել է 42 հոգի: 2024 թվականին դասընթացին մասնակցել է 6 շահառու, իսկ դասընթացի մեկնարկից սկսած՝ 243 շահառու:	
		16.3 Դպրոցներում ագրոտեխնոլոգիական մասնագիտություններ	ՀԱԱՀ-ում 2023-2024 ուստարվանից ներդրվեցին պիլոտային «Ագրոտեխնոլոգիա	Ընդհանուր առմամբ, ավելի քան 350 աշակերտ ուսումնառություն է ստանում «Ագրոտեխնոլոգիա	

		ի ոլորտի նկատմամբ հետաքրքրության խթանման նպատակով Հանրապետության 10 մարզերի ավագ դպրոցներում «Ագրոտեխնոլոգիա» դասընթացի ներդրում, մասնագիտական կողմնորոշման ակումբների, խմբակների ձևավորում	դասընթաց» մասնագիտական կողմնորոշման խմբակները: 2024-2025 թվականների ուստարում Սյունիքի մարզի 9 դպրոցի փոխարեն արդեն խմբակներ են ձևավորվել 15 դպրոցում: Ընթացիկ տարում արդեն իսկ նախորդ ուսումնական տարվա ընթացքում փորձարկված դպրոցներում ձևավորվել են նաև 12-րդ դասարաններ և այս 2024-2025 ուստարվա ընթացքում կլինեն առաջին շրջանավարտները: Այսպիսով, ներկա դրությամբ Սյունիքի և Տավուշի մարզերի 17 դպրոցում արդեն գործում են 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարաններ, իսկ Սյունիքի մարզի 6 դպրոցներում այս տարի բացվել են 10 և 11-րդ դասարաններ: Ձևավորված «Նորարար ջերմատուն» և «Նորարար այգի» խմբակների ուսումնական ծրագրում ներառվել է «Շրջանաձև տնտեսություն գաղափարն ու ազդեցությունը գյուղանտեսության բնագավառում» թեման, մասնավորապես առանձին 2 ժամ է հատկացվել կոմպոստացման կարևորությանը և դրա պատրաստման գործնական հմտություններին: «Մասնագիտական կողմնորոշում» կրթական ծրագրի հիմնական նպատակը սովորողների մասնագիտության գիտակցված ընտրությա նը նպաստելն է՝ անձի հետաքրքրություններին, կարիքներին և առանձնահատկություններին, ինչպես նաև աշխատաշուկայում մրցունակ աշխատուժի պահանջարկին առավելապես համապատասխանող մասնագիտական գիտակից ընտրության հնարավորություն: Այս	դասընթաց» ծրագրի շրջանակներում: Հանրակրթության ոլորտում, սովորողների մասնագիտական կողմնորոշման նպատակով 2024-2025 ուստարվանից ներդրվել է «Մասնագիտական կողմնորոշում» դասընթացը:	

			դասընթացը կնպաստի նաև արգրոարդյուբերական մասնագիտություններ-ի ուղղությամբ սովորողների հետաքրքրու-թյան բարձրացմանը:		
		16.4 Թվային տեխնոլոգիաների, արհեստական բանականության կիրառման, հիվանդությունների կառավարման ծրագրերի մշակում և ներդրում	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալու-թյան «Նորարարական գյուղատնտեսության վերապատրաստման և ուսուցման ճամբար (ԱԳՐԻ ՔԵՄՓ) ծրագիր» ծրագրի գյուղատնտե-սական տվյալների ու քարտեզագրման համա-կարգի նախագծում և փորձարկում բաղադրիչի շրջանակներում մշակվում է երկրատեղեկա-տվական համակարգերի և հեռահար զոնդավորման հնարավորությունների օգտագործմամբ թվային երկվորյակ տեխ-նոլոգիա գյուղատնտեսության համար որպես նորարար և համապարփակ հարթակ՝ սեզո-նային բերքի արդյունավետ կառավարման և ֆերմերային տնտեսությունների գործունեու-թյան օպտիմալացման համար: Տվյալ գործիքն ու հարթակը կրում են AgroTwin անվանումը: Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կողմից մշակվել է «Վնասատուների մոնիթորինգի և կառավարման ինտեգրված համակարգ՝ ՀՀ գյուղատնտեսական ոլորտի համար» ծրագիրը:	Ակնկալվող արդյունքը. AgroTwin հարթակը կներառի տվյալների մի քանի վահանակներ, որոնք թույլ կտան քաղաքականություն մշակողներին, ֆերմերներին, ներդրողներին և գյուղատնտեսության ոլորտը հետազոտողներին մոդելավորել, պլանավորել ու վերլուծել՝ արդյունավետ որոշումներ կայացնելու, օպտիմալ քաղաքականություն մշակելու, պարենային անվտանգությունը բարելավելու և գյուղա-տնտեսությունն ավելի կայուն դարձնելու համար: Միջոցառման շրջանակում 2024 թվականի հոկտեմբերի 7-ին Էկոնոմիկայի նախարարությու-նում կայացել է՝ Էկոնոմիկայի, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարո-ությունների և Հայաստանի ազգային ագրարային համալ-սարանի ներկայացուցիչների հանդիպում: Հանդիպման ընթացքում քննարկվել է Հայաստանի	

				ազգային ագրարային համալսարանի ներկայացուցիչների կողմից առաջարկվող թվային տեխնոլոգիաների, արհեստական բանականության կիրառմամբ բույսերի, վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների թվայնացված հարթակի ստեղծման գաղափարը: Առաջարկ է հնչել հարթակի գործարկումը սկսել խաղողի վնասատուների դեմ պայքարի միջոցառումներից՝ հաշվի առնելով, որ խաղողի այգիների ռեեստրի ստեղծման ծրագիրը հավանության է արժանացել Թվայնացման խորհրդի կողմից: Քննարկվել է պիլոտային ծրագրի տարբերակ, որը կիրականացվի մեկ համայնքում՝ ծիրանի, խաղողի և այլ մշակաբույսերի վնասատուների և հիվանդությունների ուղղությամբ:	
		16.5 Թվային տեխնոլոգիաների կիրառմամբ աջակցություն գիտակրթական համակարգերի զարգացմանը և շուկայի պահանջներին համապատասխան կադրերի պատրաստում	Ամրապնդվում են հետազոտական և նորարարական կապերը Հայաստանի և Ղրղզստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների, արդյունաբերության և վարչարարական համակարգերի միջև աշխարհատեղեկատվական տեխնոլոգիաների (GIT) և հետբուհական բարձրագույն կրթության ծրագրերի զարգացման ոլորտում: Իրականացվել է հետբուհական կրթության Գեոինֆորմացիան տեխնոլոգիաների կրթական ծրագրերի միջազգային փորձի	Բարելավվել և թարմացվել է ԱՏՀ լաբորատորիան, դրոնների ծրագրային ապահովման կազմը: Ստեղծվել են միջառարկայական հետբուհական ծրագրեր (դասընթացներ, համատեղ ասպիրանտական ծրագրեր), որոնք բարձրացնում են աշխարհատեղեկատվական տեխնոլոգիաների ներուժը:	

			ուսումնասիրում, վերլուծություն և գնահատում: ՀԱԱՀ-ի Ջրային և հողային ռեսուրսների կառավարման ամբիոնի դասախոսները մասնակցել են միջազգային վերապատրաստումների (Բելգիա, Իսպանիա, Շվեդիա, Ղրղզստան): Վերապատրաստումների արդյունքում մասնագետները ձեռք են բերել նորագույն գիտելիքների աշխարհատեղեկատվական տեխնոլոգիաների նորարությունների վերաբերյալ: Նշված վերապատրաստված մասնագետները մասնակցում են ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության կողմից իրականացվող Հայաստանի ջրային ռեսուրսների կառավարում ծրագրին: ՀԱԱՀ դասախոսները մասնակցում են հազվագյուտ բույսերի թվային քարտեզագրման աշխատանքներին, գնահատում բացահայտված վայրերի նոր հնարավորությունները ագրոտուրիզմի զարգացման համար: Դրոնների լաբորատորիայի բազայի վրա իրականցվում է թվային քարտեզագրում հողերի միավորման, ոռոգման համակարգերից ջրի կորուստների գնահատման մեթոդաբանության մշակման վրա:	2024 թվականի հունվարի 1-ից մինչև օրս իրականացված կարճաժամկետ վերապատրաստումների արդյունքում շուրջ 727 երիտասարդ վերապատրաստվել է հետևյալ ուղղություններով՝ – բուսաբուծական մթերքների վերամշակում՝ պահածոյացման տեխնոլոգիաներ, – դեկորատիվ բույսերի ագրոտեխնոլոգիա և լանդշաֆտային դիզայն, – տրակտորիստ-մեքենավարներ, – հացատեսակների և հրուշակեղենի արտադրություն, – շոկոլադագործություն, – ձկնաբուծություն, – չրագործություն, – քրաֆտ գարեջրագործություն, – մեղվաբուծության հիմունքներ, – ԱԹՍ-ների կիրառմամբ գյուղատնտեսական սրսկումների իրականացում, – պտղաբուծություն. Դասավանդման ժամանակակից մեթոդներ, ջերմատնային մշակաբույսերի մշակություն և կառավարում:	
17	Գյուղատնտեսության ոլորտի վիճակագրության հավաքագրման	17.1 Գյուղացիական տնտեսավարողների գրանցման և գյուղատնտեսական արտադրանքի հայտարարագրման	Լրամշակման փուլում է գտնվում «Գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքը, որտեղ ներառված են նաև գյուղացիական տնտեսավարողների գրանցման և գյուղատնտեսական արտադրանքի	Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Խաղողի տնկարկների ռեեստրը դառնալու է Խաղողի արժեշղթայի միասնական էլեկտրոնային տեղեկատվական	

	համակարգի բարելավում	օրենսդրական դաշտի մշակում, հաստատում և փուլային ներդրում:	հայտարարագրման պահանջ սահմանելու մասին դրույթներ: Բացի այդ, խաղողի տնկարկների ռեեստրի ստեղծման նպատակով ընթացքի մեջ են միասնական էլեկտրոնային տեղեկատվական հարթակի ստեղծման աշխատանքները: Այդ նպատակով գույքագրվել են խաղողի ամբողջ այգետարածքները և ընթանում են դրանց նույնականացման աշխատանքները, որոնց շուրջ 80%-ը նույնականացվել են: Խաղողի տնկարկների տեղեկատվությունն ազգային գեոպորտալի հետ ինտեգրելու նպատակով Էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել է «Խաղողի տնկարկ» թեմատիկ շերտի ստանդարտը և ներկայացվել է Կադաստրի կոմիտե՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի N 1569-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծում ներառելու նպատակով: Կադաստրի կոմիտեի կողմից վերը նշված նախագիծը սահմանված կարգով ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Այնուհետև խաղողի այգետարածքների վերաբերյալ տեղեկատվությունը կփոխադրվի Էկոնոմիկայի նախարարության GIS ծրագրով համալրված սերվերի վրա՝ պարբերաբար ամբողջացնելու և թարմացնելու նպատակով:	համակարգի բաղադրիչ: Խաղողի արժեշղթայի միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ներդրման նպատակով մշակվել է տեխնիկական առաջադրանքը և հաստատվել թվայնացման խորհրդում: Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից հայտարարվել է երկփուլ մրցույթ, հաղթող է ճանաչվել Իտալական ABACO S.P.A. կազմակերպությունը, սակայն գնման գործընթացի անգործության ժամկետում մրցույթի մասնակից «Այյունեթվորքս» ՍՊԸ-ն հայցադիմում է ներկայացրել ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան, որի վերաբերյալ ընդունվել է վարույթ: Գնման գործընթացը կասեցվել է մինչև դատարանի կողմից դատական գործի քննության արդյունքում վճռի կայացումը: Քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտը հրապարակվել է 2025 թվականի հունվարի 9-ին, որով մերժվել է «Այյունեթվորքս» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի: Արդյունքում գնման գործընթացի	

				կասեցումը վերացվել է և Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը շարունակելու է պայմանագրի կնքման գործընթացը հաղթող ճանաչված մասնակցի հետ:	